



**ԵՐԵՎԱՆԻ ՎԵՐՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Մանկավարժության և լեզուների դասավանդման
մեթոդիկայի ամբիոն**

Ֆիզդաստիարակության և քաղաքաշտպանության ամբիոն

**ՄԱՐԴՈՒ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ**

Գիտաժողովի նյութեր

**ԵՐԵՎԱՆ
«ԼԻՆԳՎԱ» հրատ.
2009**

ՀՏԴ 06:502:340:37
ԳՄԴ 20.1+67+74
Մ 356

Տպագրվում է Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվաբանական համալսարանի գիտխորհրդի որոշմամբ

Մ 356 Մարդու բնապահպանական իրավունքները և կրթությունը
/գիտաժողովի նյութեր/. – Եր.: Լինգվա, 2009 –50 էջ:

ԳՄԴ 20.1+67+74

ISBN 978-9939-56-011-3

© «Լինգվա», 2009թ.

ՆԱԽԱԲԱՆ

Սույն ժողովածուն ստեղծվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի կողմից կազմակերպված «Մարդու բնապահպանական իրավունքները և կրթությունը» թեմայով գիտա-ժողովի արդյունքների հիման վրա: Գիտաժողովում քննարկվել են թեմային առնչվող էկոլոգիական դաստիարակության մի շարք հարցեր:

Այսօր անհրաժեշտություն է ծագում վերանայել սովորողների արժեքային համակարգը՝ բնության և էկոլոգիայի նկատմամբ մարդասիրական վերաբերմունք ձևավորելու տեսանկյունից:

Հունամիտար բուհի ուսանողների էկոլոգիական դաստիարակությունը պայմանավորված է ժամանակակից հասարակության մեջ բազմակողմանի, ներդաշնակ մարդու ձևավորմանը ներկայացվող նոր պահանջներով: Շրջապատող միջավայրի բարելավման մեջ հսկայական է կրթության դերը:

Էկոլոգիական դաստիարակության նպատակն է.

- ծանոթացնել ազգային և համամարդկային էկոլոգիական ավանդույթներին,
- ձևավորել ներդաշնակ էկոլոգիական գիտակցություն և վարք ունեցող մարդ,
- նպաստել նրա ինքնուրույն էկոլոգիական մտածելակերպի ձևավորմանը և սեփական գործունեության արդյունքների կանխատեսմանը,
- ձևավորել բնական միջավայրում բարոյական նորմերի և պատկերացումների վրա հիմնված վարվելակերպ:

Այս նպատակների իրականացումը կնպաստի անձի էկոլոգիական գիտակցության, կուլտուրայի և վարքի ձևավորմանը:

«Մարդու բնապահպանական իրավունքները և կրթությունը» թեմայով գիտաժողովին իրենց հետազոտական աշխատանքներով մասնակցել են ԵՊԼՀ օտար լեզուների ֆակուլտետի 7 ուսանող՝ մանկավարժության և լեզուների դասավանդման ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լ.Խ. Միլիտոսյանի ղեկավարությամբ:

*Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի
Մանկավարժության և լեզուների
դասավանդման մեթոդիկայի ամբիոն*

Ֆիզդաստիարակության և քաղաքաշտպանության ամբիոն

Բովանդակություն

| | |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Գ. Բալայան, ԵՊԼՀ, պրոռեկտոր <i>Շրջակա միջավայրի պահպանությունը որպես սահմանադրական պահանջ</i> | 5 |
| Լ.Միլիտոսյան, ԵՊԼՀ, մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ <i>Չունանիտար մասնագիտություն ստացող ուսանողների էկոլոգիական կրթության և դաստիարակության ծրագրի անհրաժեշտության մասին</i> | 8 |
| Գ. Սալխասյան, ԵՊՀԲ, հասարակագիտական ամբիոնի դասախոս <i>Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը</i> | 13 |
| Ս. Սալխասյան, ԵՊԼՀ, ֆիզդաստիարակության և քաղապաշտպանության ամբիոնի դոցենտ <i>Բնապահպանությունը և արդի զբոսաշրջությունը</i> | 17 |
| Է.Սահակյան, ԵՊԼՀ, ֆիզդաստիարակության և քաղապաշտպանության ամբիոնի ավագ դասախոս <i>Բնապահպանական կրթությունը և դաստիարակությունը</i> | 21 |
| З. Аветикян, ЕГЛУ, ст. преподаватель кафедры физического воспитания и чрезвычайных ситуаций <i>Природоохрана и стабильное развитие общества</i> | 27 |
| Р.Геворкян, ЕГЛУ, доцент кафедры ЮНЕСКО по правам человека и демократии <i>Экологические проблемы человечества</i> | 33 |
| Պ.Չամբարձումյան, Ի.Դանիելյան, ԵՊԼՀ, ՕԼՖ, գիտական ղեկավար՝ Լ.Միլիտոսյան, ԵՊԼՀ, մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ <i>Էկոլոգիական դաստիարակության նպատակը և խնդիրները</i> . | 37 |
| Տ.Սկրտչյան, Ա.Ստեփանյան, Տ.Բայաթյան, ԵՊԼՀ, ՕԼՖ, գիտական ղեկավար՝ Լ.Միլիտոսյան, ԵՊԼՀ, մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ <i>Էկոլոգիական դաստիարակության պատմությունից</i> | 41 |
| Ս.Օնանյան, Զ.Սարոյան, ԵՊԼՀ, ՕԼՖ, գիտական ղեկավար՝ Լ.Միլիտոսյան, ԵՊԼՀ, մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ <i>Էկոլոգիական դաստիարակության մեթոդները դպրոցում</i> | 45 |

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋ**

Շրջակա միջավայրի վիճակն արդի աշխարհում վերահսկվում է բազմաթիվ միջազգային և ներպետական կառույցների, հասարակական կազմակերպությունների կողմից, քանի որ միջավայրի վտանգված լինելու դեպքում այն չի կարող սահմանափակվել պետական սահմաններով, այլ ենթակա է տարածման նաև այլ երկրների վարչական տարածքներում: Բավական է հիշել միայն մի քանի դեպք համաշխարհային նորագույն պատմությունից՝ «չերնոբիլյան աղետ», տարբեր բնական աղետներ, որոնք մարդու կողմից շրջակա միջավայրի հանդեպ սխալ վերաբերմունքի արդյունք էին: Բնապահպանական իրավունքը կարելի է դիտել որպես ՀՀ Սահմանդրության մի քանի հոդվածների կողմից ամրագրված նորմերի պահանջ: Առանց բավարար էկոլոգիական պայմանների, գրեթե անհնար է դառնում մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության և Միջազգային փաստաթղթերի մեջ ամրագրված իրավունքների և ազատությունների իրականացումը: Մաքուր և անվտանգ միջավայրում ապրելու իրավունքը մարդու անօտարելի իրավունքերից է: Մասնավորապես ՀՀ Սահմանդրության 33.2 հոդվածը սահմանում է, *«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը: Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար»:* Վերլուծելով այս հոդվածը՝ պետք է արձանագրել, որ պետությունը իր տարածքում էկոլոգիապես մաքուր շրջակա միջավայրում ապրելու իրավունք է վերապահում ոչ միայն իր քաղաքացիներին: Այդ իրավունքից կարող է օգտվել նաև ցանկացած անձ, ով գտնվում է ՀՀ-ում: Վերոնշյալ հոդվածը իմպերատիվ կերպով շեշտում է այն հանգամանքը, որ ցանկացած անձ պարտավոր է պահպանել և բարելավել շրջակա միջավայրը: Հոդվածը սահմանում է նաև, որ անհատը պետք է հոգ տանի շրջակա միջավայրի մասին ոչ միայն անձամբ, այլ նաև այլոց հետ, այսինքն՝ նշված պարտավորություններն իրականացնելու համար պետք է հնարավորինս շատ համախոհներ ներգրավի: Նշված հոդվածի երկրորդ մասը պաշտոնատար անձանց համար պատասխա-

նատվություն է սահմանում բնապահպանական տեղեկությունները քաբցնելու կամ տրամադրումը մերժելու համար: Սա բավական կարևոր նշանակություն ունի ՀՀ-ի համար, քանի որ Հայաստանում գործում է ատոմակայան: Փաստորեն այս դրույթով Սահմանադրությունը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր մարդու տեղեկանալու պետության բնապահպանական վիճակի մասին: Սահմանադրության շատ քիչ հոդվածներում կարելի է հանդիպել պաշտոնատար անձանց պատասխանատվության կանչելու ուղղակի նորմերի, (դա հիմնականում թողնված է օրենքների կարգավորմանը) սակայն, ինչպես տեսնում ենք, այս ոլորտում երկրի հիմնական օրենքը նախատեսել է նաև պատասխանատվության կանչելը կոնկրետ դեպքերի համար:

ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածը, որոշակի ոլորտներում, սահմանում է պետության հիմնական խնդիրները և պետությանը պարտավորեցնում է իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել այդ խնդիրներն իրականացնելու համար: Նշելով այն հանգամանքը, որ Սահմանադրության 48-րդ հոդվածի 12 կետերից 11-ն անուղղակիորեն կապված են շրջակա միջավայրի պահպանության հետ, 10-րդ կետը ուղղակիորեն սահմանում է, որ պետությունը պարտավոր է *«իրականացնել ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն»*:

Սահմանադրության այս պահանջը փաստորեն, հրամայական է բոլոր մակարդակի պաշտոնյաների համար՝ իրենց գործունեության շրջանակներում առաջնահերթ դարձնել բնապահպանական անվտանգության խնդիրը: Սահմանադրության պահանջներն իրենց զարգացումն են ստացել ՀՀ օրենքներում: Մշակվել և ընդունվել են բազմաթիվ օրենքներ և այլ նորմատիվ իրավական ակտեր: Այլ որոտներին վերաբերվող օրենսդրության մեջ ևս խոսք է գնում բնապահպանական խնդիրների մասին: Մասնավորապես, Սահմանադրության 23 և 24 հոդվածներով ամրագրված է յուրաքանչյուր անձի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը: Սույն հոդվածները նախատեսում են այդ իրավունքերի սահմանափակում օրենքով սահմանված կարգով դատարանի որոշմամբ: Սահմանադրության 44-րդ հոդվածը նախատեսում է, որ այդ իրավունքները ենթակա են սահմանափակման արտակարգ դրության ժամանակ և արտակարգ իրավիճակներում: Ի կատարումն այս դրույթի՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի 8-րդ կետը անդրադառնում է հենց այդ բացառություններին՝ հնարավորություն տալով օպերատիվ-հետա-

խուզական գործունեություն իրականացնող մարմնին, այդ մարմնի ղեկավարի որոշմամբ ՀՀ-ի «բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձությունների կամ գործողությունների» վտանգի դեպքում որոշակի ժամկետով սահմանափակելու մարդու վերոնշյալ իրավունքերը: Չմանրամասնելով, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ նշված լիազորության չարաշահումը, պետք է արձանագրել պետության բավական լուրջ վերաբերմունքը շրջակա միջավայրի պահպանության խնդրին:

Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (Ընդունվել է 05.07.2005)

Լ.Միլիտոսյան ԵՊԼՀ,
մանկավարժության և լեզուների
դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի դոցենտ

**ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ԷԿՈԼՈԳԻՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻՐԱՎԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երկրագնդի վրա մարդու գոյապահպանությունը ժողովրդների առջև հառած բազմաթիվ սոցիալ-քաղաքական խնդիրների շարքում ավելի ու ավելի կարևոր տեղ է զբաղեցնում:

Նոր հազարամյակում Մարդը ինքն իր համար դարձել է աքիլեսյան գարշապար. ինքն է սկիզբը հաշվարկի «և նրա մեջ է սկիզբը և վերջը»: Ինչպես գրում է Լ.Գորը. «Կամ մարդը պետք է փոխվի կամ նա դատապարտված է չքանալու երկրագնդի վրայից»:

Այսօր անհրաժեշտ է մարդկային կերպարի վերանայումը արժեքային նոր համակարգում, որում պետք է առկա լինի մարդու հունանիստական վերաբերմունքը ինքն՝ իր և բնության հանդեպ:

Հունանիտար մասնագիտությունն ստացող ուսանողների էկոլոգիական կրթության և դաստիարակության ծրագրի անհրաժեշտությունը պայմանավորված է ժամանակակից հասարակության մեջ բազմակողմանի, ներդաշնակ մարդու ձևավորմանը ներկայացվող արդեն նոր պահանջներով: Ծրջապատող միջավայրի բարելավման մեջ հսկայական է կրթության դերը. առաջինը՝ տարբեր բնույթի էկոլոգների պատրաստումը և երկրորդը՝ էկոլոգիական գիտելիքների տարրերի ներգրավումը ուսումնական հաստատություններում դասավանդվող մի շարք առարկաների մեջ, և դրանց միջոցով էկոլոգիական գիտակցության ձևավորումը տարիքով և կրթվածության մակարդակով իրարից տարբերվող մարդկանց մոտ: Այսպիսով, էկոլոգիական դաստիարակվածությունը և կրթվածությունը պետք է դիտարկվեն որպես անձի ձևավորման անհրաժեշտ բաղադրիչ:

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության և կրթության նպատակը XX դարի 70 - ական թվականներին գիտակցվել է իբրև խնդրի լուսաբանման, 80-ական թվականների երկրորդ կեսին՝ իբրև էկոլոգիական մշակույթի և շրջակա միջավայրի պահպանման, 90 - ական թվականների սկզբին՝ բնության հանդեպ պատասխանատու վերաբերմունքի և էկոլոգիական մտածելակերպի ու գիտակցության ձևավորան խնդիր: Սակայն էկոլոգիական դաստիարակության և կրթության ընթացքում կիրառվող մեթոդները գլխավորապես միտված էին ֆունդամենտալ և կիրառական էկոլոգիայի գի-

տելիքների փոխանցմանը, որը չէր լրացնում շրջակա միջավայրի վերաբերյալ սովորողների ունեցած գիտելիքների և նույն շրջակա միջավայրի պահպանման հրամայականի միջև գոյություն ունեցող բացը: Խոսելով ժամանակակից էկոլոգիական դաստիարակության և կրթության մասին՝ պետք է հաշվի նստել հետևյալ մոտեցումների հետ. շրջակա միջավայրի վերաբերյալ «դասական» մոտեցման վերանայում, հանուն նրա՝ մարդու դաստիարակությունից ու կրթությունից անցում հանուն մարդու, հասարակության և առողջ միջավայրի դաստիարակության և կրթության, էկոլոգիական դաստիարակությունը և կրթությունը առկա կրթահամակարգի մեջ որպես լոկ լրացուցիչ բաղադրամաս դիտարկելու պահանջից անցում նրա ճանաչմանը՝ որպես համապարփակ կրթական ծրագրի հիմնական բաղադրամասի: Էկոլոգիական դաստիարակության և կրթության ընկալումը որպես քաղաքական կրթության ձևի, որը մարդկանց զինում է դեպի աշխարհը բացվող բանական, ռացիոնալ հայեցակերպով և մարդու դերի ճշգրտումը նրանում՝ որպես ժամանակակից, անհատի, հասարակական և քաղաքական գործունեության հիմք, որը, ի վերջո, կօգնի դեստրուկտիվ ուղուց մարդկությանը դուրս բերել դեպի խելամիտ զարգացման և շրջակա միջավայրի հետ միասնության ցանկալի ուղի:

Արդյունավետ «էկոլոգիական» ծրագրի նպատակն է սովորողներին հայեցողական պասիվ շրջանակներից ուղղորդել դեպի շրջապատող միջավայրի հետ ակտիվ փոխներգործություն՝ հենվելով հասարակական և քաղաքական համակարգի ընձեռած հնարավորությունների վրա, որպեսզի ուսանողները կարողանան տեսական իմացությունը «փոխակերպել» գործնական վարմունքի, ակտիվ գործունեության: Նշված առաքելության համար ներկայացնում ենք էկոլոգիական դաստիարակության ու կրթության մի ծրագիր, որը նախատեսված է հումանիտար ուղղվածություն ունեցող մասնագիտական ուսումնական հաստատությունների համար:

Դասընթացի նպատակն է.

- ձևավորել ներդաշնակ էկոլոգիական գիտակցություն և վարք ունեցող անհատ,
- նպաստել նրա ինքնուրույն էկոլոգիական մտածելակերպի ձևավորմանը և սեփական գործունեության արդյունքների կանխատեսմանը:

Ելնելով վերը նշվածից՝ կարելի է ձևակերպել հումանիտար բուհի և քոլեջի ուսանողների հետևյալ խնդիրները.

- մարդկության պատմության և բնության պատմության փոխկապակցվածության մասին գիտելիքների յուրացում,

- բնության օրենքների մասին գիտելիքների յուրացումը դարձնել օպտիմալ որոշումներ կայացնելու հեռընդհանուր հիմք,
- հասարակության և մարդու կողմից բնության արժեքների բազմակողմանի ըմբռնում,
- բնության հետ խելամիտ հարաբերելու պահանջների զարգացում,
- բնական միջավայրում բարոյական նորմերի և պատկերացումների հիման վրա վարվելակերպի նորմերի տիրապետում,
- շրջակա բնական միջավայրի պահպանման և բարելավման համար ակտիվ գործունեություն ծավալելու հնտությունների ձեռքբերում,
- ծանոթացում ազգային և համամարդկային էկոլոգիական ավանդույթներին,
- մանկավարժության պատմության ընթացքում բարձրացված էկոլոգիական ոլորտի խնդիրների ուսումնասիրում,
- էկոլոգիական դաստիարակության և կրթության գործընթացում հունանիտար առարկաների դերի բարձրացում,
- էկոլոգիական գիտակցության և վարքի ձևավորման համար միջառարկայական և ինտեգրված կապերի արմատավորում:

Մեթոդական ապահովվածության բարելավման կարելի է հասնել մանկավարժական նոր տեխնոլոգիաների՝ համագործակցային, ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ, այն ուղղելով սովորողի իմացական և ստեղծագործական ոլորտների և ընկալման տարբեր ուղիների ակտիվացմանը: Գիտելիքները պետք է ոչ թե մատուցվեն, այլ «բացահայտվեն» լսարանի կողմից և համապատասխանաբար փաստարկվեն, ինչը կնպաստի ուսանողի կողմից էկոլոգիական գիտելիքների արժևորմանը: Էկոլոգիական դաստիարակության և կրթության մեթոդները պետք է նպաստեն բնության էմոցիոնալ և ռացիոնալ ընկալմանը, կենսաբանական և հումանիտար գիտելիքների միավորմանը, աշխատեն այդ ամենի ամբողջական պատկերի ստեղծման համար:

Այս իմաստով մեծ դեր է հատկացվում խղիխտիկ, համագործակցային և ինտերակտիվ մեթոդներին, որոնք պետք է.

- նպաստեն իմացական և ստեղծագործական պահանջմունքների բավարարմանը և ուսանողների ինքնուրույնության զարգացմանը. այս պահանջից բխում է դասախոսի դերի վերանայումը՝ իբրև ֆասիլիտատոր (ֆասիլիտատորական մոտեցումը հիմնված է դասախոսի և ուսանողի համագործակցության վրա: Ֆասիլիտատորի գործելակերպն է՝ զգալ քննարկող կողմերի

վերաբերմունքը խնդրո առարկայի վերաբերյալ, դեկավարել քննարկման տևողությունը և ընթացքը, խթանել կարծիքների ազատ արտահայտումը, մասնակիցների ստեղծագործական ակտիվությունը, արձանագրել խմբի համատեղ հաջող աշխատանքը, պահպանել անաչառություն, օգնել մասնակիցներին՝ հաղթահարել համատեղ աշխատանքի խոչընդոտները): Մեթոդները պետք է

- նպաստեն պրոբլեմային խնդիրների ինքնուրույն լուծմանը և գիտելիքների կիրառմանը կյանքում: Այս պահանջին համապատասխանում են պրոբլեմային ուսուցման մեթոդները, որոնք
- կխթանեն աշակերտների կողմից գիտելիքների «բացահայտմանը» սոցիո - էկոլոգիական խնդիրների լուծման հմտությունների ձեռքբերմանը: Այս խնդիրը կլուծվի ինտերակտիվ ուսուցման մեթոդների ներդրման շնորհիվ, քանզի դրանք
- կնպաստեն էկոլոգիական գիտակցության ձևավորմանը, գործունեության պլանավորման և էկոլոգիական նախագծերի նախաձեռնմանը և իրագործմանը, էկոլոգիական վարքագծի և էթիկայի ձեռք բերմանը:

Այդ մեթոդների շարքին են պատկանում հետևյալ մեթոդները՝ նախագծի մեթոդ, աշխատանք փոքր խմբերով, մտային գրոհ, դերային խաղեր, համագործակցային մեթոդներ, խոսքային, գործնական և զննական մեթոդներ, դիտում, զեկույց, շնորհանդես, ցուցադրում, ուսումնասիրություն, ուսումնական զրույց, զրույց կլոր սեղանի շուրջ, պրոբլեմային բանավեճ, դեպքի հետազոտում, մոդելացվող մտային գրոհ, միջառարկայական նախագծերի և թեմատիկ միավորներով պլանավորման մեթոդներ, ավանդական մեթոդները: Ամբողջ ուսումնական գործընթացը պետք է կողմնորոշված լինի ստեղծելու ռացիոնալ և պատկերավոր մտածելակերպ, իմացական և գործունեությանը միտված մթնոլորտ, այնպիսի ուսումնական միջավայր, որը հնարավորություն կտա բացահայտել ուսանողի հնարավորությունները, կազմակերպել արդյունավետ խմբային աշխատանք: Այս ամենը պետք է նպաստի այնպիսի անձի ձևավորմանը, որի մեջ ներդաշնակորեն կմիախուսվեն լսելու, տեսնելու և գիտակցված գործելու կարողությունները:

Գրականություն

1. Антонов Е.А. Мировоззренческие ориентации в экологии на пороге XXI века. Науч. Ведомости БГУ. 1996. № 3. с. 11-20
2. Арсеньев А.С. Философский аспект экологической проблемы. Культура. Традиции. Образование. М., 1995. Вып. 3-4. с. 111-132

3. Бачинский Г.А. Социоэкология: теоретические и прикладные аспекты. Наукова думка,. Статус социоэкологии как самостоятельной науки, ее место в современной системе наук Киев 1991. 153с
4. Вернадский В.И. “Химическое строение биосферы Земли и ее окружения.”, М., 1987г.
5. Гор Л. Земля на чаше весов, М., 1993. с. 424 – 430
6. Гумилев. Л. «Этносы в ландшафтах, М., 1988
7. Реймерс Н.Ф. Надежды на выживание человечества. Концептуальная экология. Рос.открытый ун-т. М. Изд. центр Россия молодая, Экология, 1992. с. 365
8. Ասատրյան Լ.Թ., Սարգսյան Փ.Ա. Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների էկոլոգիաական կրթությունը ու դաստիարակությունը
9. Միլիտոսյան Լ., Հակոբջանյան Հ., Դիմելով անցյալի ակունքին՝ ոչ թե մոխիրը, այլ կրակը վերցրեք, Մանկավարժական միտք N1, Երևան 2002թ., էջ՝ 111-117
10. Милитосян Л.Роль педагогики в экологическом образовании будущих учителей иностранного языка «Экологическое образование: на пороге «РИО+10 VIII Международная конференция по экологическому образованию», М. 2002г.

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻՎՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բնության պահպանությունը այսօր դարձել է հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղություններից մեկը, որի պատճառով խոր տեղաշարժեր են կատարվում հասարակական արժեքների, մարդկանց վարքի և գիտակցության, հետաքրքրությունների, բարոյական որակների գիտելիքների մեջ՝ կապված հասարակության և բնության փոխհարաբերությունների հետ:

Էկոլոգիական դաստիարակությունը և կրթությունը՝ որպես բազմատեսանկյուն գործընթաց, ուղղված են երիտասարդների մոտ այնպիսի հոգեկան դիրքորոշման և աշխարհայացի մշակմանը, որի ընթացքում սերը բնության նկատմամբ, նրա հետ միասնության գաղափարը դառնում են համոզմունքներ:

Հասարակության առաջընթացը ենթադրում է մարդկանց ակտիվ դիրքորոշում, ինքնակազմակերպում, պարտքի և պատասխանատվության բարձր գիտակցություն: Իր հերթին հասարակության նյութական և հոգևոր պոտենցիալի զարգացումը նպաստում է անձի լիարժեք զարգացմանը, և բնականաբար հասարակական գիտակցության ուղորտներից մեկը, որը հասարակության և բնության հարաբերություններում մարդկանց վարքի կարգավորման սոցիալ-տնտեսական կարևոր գործառույթ է կատարում:

Մարդու աշխարհը՝ նրան շրջապատող միջավայրն է, և նրա նկատմամբ անձի վերաբերմունքը ենթարկվում է մի շարք կատեգորիաների, որոնք ունեն բարոյական բովանդակություն: Սրանց թվին է պատկանում պատասխանատվության կատեգորիան, որը և իրավական, և բարոյական կատեգորիա է և արտացոլում է անհատի սոցիալական, բարոյաիրավական վերաբերմունքը, պատասխանատվությունը հասարակության և բնության նկատմամբ, բնութագրում է անհատի ընդունակությունը և հնարավորությունը՝ բնապահպանական պահանջներն ու խնդիրները իրագործելու բարոյական ընտրությունը:

Այս հարցը դարեր շարունակ քննարկման առարկա է դարձել, և ժամանակակից գիտամեթոդական հետազոտությունները ցույց են տալիս, որ այսօրվա երիտասարդը պատրաստ չէ այդ պատաս-

խանատվությանը և ինքնուրույնությանը, դրանց նկատմամբ եղած պահանջներին, որոնք հասարակությունը ներկայացնում է նրանց:

Ահա այս առումով հատուկ նշանակություն է ստանում երիտասարդների էկոլոգիական դաստիարակությունը և կրթությունը, որն ուղղված է շրջակա միջավայրի և մարդկանց նկատմամբ պատասխանատվության ձևավորմանը: Էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես մարդու կողմից բնության արտադրական և հոգևոր- գործնական յուրացման որոշակի նորմերի և կանոնների, սերնդից սերունդ բնօգտագործման և բնապահպանական փորձի փոխանցման յուրահատուկ եղանակ, գոյություն է ունեցել մարդկային քաղաքակրթության և մշակույթի պատմության բոլոր ժամանակաշրջաններում:

Էկոլոգիական դաստիարակությունը ընդհանրացված տեսքով բնության ուժերի յուրացման ու սոցիալականացման, մարդկության հասարակական-պատմական փորձի հոգևոր- գործնական դրսևորման հանրագումարն է, մարդու, հասարակության և բնական միջավայրի հարաբերությունների կարգավորման «մեխանիզմը»:

Մարդու և բնության փոխհարաբերության բարոյագեղագիտական կողմի բացահայտման հարցերում գլխավոր դերը պատկանում է հումանիտար և գեղագիտական շարքի առարկաներին:

Բնությունը երեխաների և երիտասարդների գեղագիտական զարգացումների հարստության աղբյուրն է իր բնական շարժուն վիճակով: Շրջապատող բնության մեջ ամեն մի մասնիկ և պահ ունի իր գեղեցկությունը և դրանով ազդում է մարդու ողջ հոգևոր կերպարի վրա՝ ազնվացնելով և վեհացնելով նրան:

Անտառների ու դաշտերի երաժշտական շրշյունը, լեռների վեհությունը, թռչունների ծլվլոցը, գետերի խշշոցը և սրանց զուգակցումը գեղեցիկի հետ երեխաների մոտ առաջացնում է թանկ ու հարազատ զգացմունքների մի ամբողջ համալիր, որը և ընկած է հայրենասիրական զգացմունքների հիմքում: Դպրոցականների և ուսանողների կրթության կարևոր բաղադրիչ է դեպի բնությունը պատասխանատու վերաբերմուք ձևավորելը: Պետք է բացահայտել բնության դերը երիտասարդի դաստիարակման և պատասխանատու վերաբերմունքի ձևավորման գործում: Բնության հետ շփման գործընթացում է ձևավորվում երիտասարդների մտավոր զարգացման և բարոյական հարստացման միասնությունը:

Երիտասարդի մոտ հոգատար վերաբերմունք դեպի բնությունը կարող է ծագել միայն այն դեպքում, եթե նա շրջակա միջավայրը բարեկարգում է իր աշխատանքով, և եթե, երիտասարդը հրճվում է բնության գեղեցկությամբ և այն վերստեղծում է իր ձեռքերով, նա չի կարող չար լինել:

Էկոլոգիական դաստիարակության խնդիրը ընդգրկում է և իր մեջ ներառում է բնության նկատմամբ խնայողական- պահպանողական վերաբերմունքի մշակումը, երիտասարդների մոտ **մարդ-բնություն- հասարակություն** համակարգի գործունեության գիտակցական կառավարման և հուզական ընկալման դաստիարակումը:

Սա պետք է իրականացնել բնագիտական, աշխարհագրական, գեղագիտական շարքի առարկաների էկոլոգիական ուղղվածության ուժեղացմամբ՝ դպրոցի բարձր դասարաններում պետք է դասավանդել «Էկոլոգիա և բնության պահպանություն» առարկան: Ուսանողների համար պետք է հաճախ կազմակերպել էքսկուրսիաներ, արշավներ, ապահովել նրանց մասնակցությունը բնապահպանական միջոցառումներին: Այս գործում կարևոր դեր ունենան բնապահպանական հասարակական կազմակերպությունները: Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը ոչ միայն աշխարհայաց են ձևավորում, այլև մարդասիրական աշխարհընկալում:

Անզնահատելի է նաև գրականության դերը այս գործում: Բնության և մարդու ներդաշնակության բազմաթիվ չքնաղ օրինակներ կան հայ և համաշխարհային դասականների ստեղծագործությունների մեջ, որոնք դպրոցականները և երիտասարդները պետք է ուսումնասիրեն: Գեղարվեստական գրականությունը, ընդհանրապես, անձի վրա ներազդելու մեծ հնարավորություններ ունի, այդ թվում բնության նկատմամբ սիրո, պաշտանմունքի դաստիարակման:

Էկոլոգիական գիտակցության, աշխարհայացքի ձևավորման արդյունավետ միջոցներ են գրական ստեղծագործությունները, կինոնկարների մասին բանավեճերը, զրույցները, փաստագրական կինոֆիլմերի թեմատիկ ցուցադրումները, ճամփորդությունները, արշավները բնության գրկում: Արշավները ոչ միայն ապահովում են մարդու հոգեկան և ֆիզիկական ուժերի լիցքավորումը, այլև գեղագիտական մեծ բավականություն են պատճառում, ընդլայնում մարդու մտահորիզոնը, կապում բնության վեհաշուք գեղեցկության հետ:

Էկոլոգիական դաստիարակության գեղագիտական տեսանկյունը պայմանավորված է բարոյական տեսանկյունով, և լրացնում են միմյանց: Գեղագիտական զգացմունքների կուլտուրան պահանջում է երիտասարդի կյանքի բարձր կուլտուրա, հատկապես բարոյական կուլտուրա, արժեքային վերաբերմունք բնության և բնության ամենաբարձր արժեքի՝ մարդու նկատմամբ: Երիտասարդի վերաբերմունքը դեպի բնությունը կարող է ծառայել որպես նրա կուլտուրայի չափանիշ, նրա որպես մարդու և որպես քաղաքացու

լիարժեքության աստիճան: Էկոլոգիական դաստիարակությունը պայմանավորված է երիտասարդի կողմից բնության պահպանության իրավական նորմերի իմացությամբ և գիտակցությամբ, որը և ենթադրում է ապագա քաղաքացու էկոլոգիական բարոյականության ձևավորումը:

Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությամբ անձի համակողմանի ընդհանուր դաստիարակության անբաժանելի մասն են:

Գրականություն

1. Ասատրյան Լ. Թ., Ավանեսյան Լ. Գ., Սահակյան Ա. Ս. - Էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում, Ձանգակ 97, Երևան 2003
2. Մարուխյան Ռ. Ջ., Հովսեփյան Ա. Ա. - Անձի էկոլոգիական կուլտուրան, Արևիկ, Երևան 2005, էջ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Բնության պահպանությունն այսօր կրում է լայնամասշտաբ բնույթ: Բնության պահպանվող տարածքների ձևավորումը սկսվել է տարերայնորեն դեռ անտիկ շրջանից, երբ մարդն սկսեց մշակել և բուծել իր շրջապատի օգտակար բույսերն ու կենդանիները: XX դարում մարդու՝ բնապահպանությանը նվիրված գործունեությունը լայն ծավալ ստացավ: Աշխարհի զարգացած երկրներում ստեղծվեցին բնության պահպանության ծառայությունների կոմիտեներ, միություններ, ընկերություններ և այլն: Հանուն բնության պահպանության միջազգային համախմբվածությունը զանգվածային բնույթ ստացավ:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (17 դեկտեմբերի 1991 թ.) համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքները մակերեսային և ստորերկրյա ջրերի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի՝ օրենքով սահմանված կարգով առանձնացված այն տեղամասերն են, որոնք ունեն հատուկ էկոլոգիական, գիտական, բուժական, մշակութային, գեղագիտական արժեք և լրիվ կամ մասամբ, ժամանակավորապես կամ մշտապես ենթակա չեն տնտեսական շահագործման»: Օրենքի համաձայն՝ Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները կարող են ունենալ չորս կարգավիճակ. պետական արգելոցներ, ազգային պարկեր, արգելավայրեր և բնության հուշարձաններ:

Իսկ ի՞նչն է այդքան սերտորեն կապում բնապահպանությունը զբոսաշրջության հետ: Ավելին, այդ կապն այնքան է խորացել, որ զբոսաշրջության մեջ առաջ է եկել նոր ճյուղ՝ էկոզբոսաշրջությունը: Նախքան մանրամասնելը տանք էկոզբոսաշրջության սահմանումը: Այս տերմինն օգտագործվում է 10 տարուց ավելի և տարբեր մեկնաբանություններ ունի:

- Էկոզբոսաշրջությունը ճանապարհորդություն է դեպի մարդու կողմից չապականված էկոլոգիապես մաքուր բնության անկյուններ՝ էկոլոգիական հավասարակշռությունը պահպանելու նպատակով,
- Էկոզբոսաշրջությունը պատասխանատու ճանապարհորդու-

թյուն է դեպի բնական տարածքներ, որը պահպանում է շրջակա միջավայրը և աջակցում տեղաբնակների կենսագործունեությունը,

- Էկոզբոսաշրջությունը նպատակաուղղված ճամփորդություն է բնության տարածքներ՝ հասկանալու համար այդ միջավայրի մշակույթն ու պատմությունը: Էկոզբոսաշրջանային երթուղիների կազմակերպումը պետք է հիմնված լինի էկոզբոսաշրջիկների 10 պատվիրանների վրա.

1. հիշել երկրի խոցելիության մասին,
2. թողնել միայն ոտնահետքեր, տանել միայն լուսանկարներ
3. ճանաչել աշխարհը, որտեղ հյուրընկալվել ես, այդ ժողովուրդների մշակույթը և աշխարհագրությունը
4. հարգել տեղաբնակներին
5. չզննել արտադրանք, որը վնասում է շրջակա միջավայրին
6. քայլել միայն արդեն օգտագործվող ճանապարհներով,
7. ամեն կերպ աջակցել շրջակա միջավայրի պաշտպանության ծրագրերին
8. հնարավորության դեպքում օգտագործել շրջակա միջավայրի պաշտպանության մեթոդները
9. աջակցել այն կազմակերպություններին, որոնք զբաղվում են բնապահպանությամբ
10. ճանապարհորդել այն զբոսաշրջային ընկերությունների հետ, որոնք հետևում են էկոզբոսաշրջության սկզբունքներին:

Հաշվի առնելով միջազգային փորձը՝ երթուղիների ձևավորման ելակետային նախադրյալները 3-ն են.

1. բնական զբոսաշրջային ռեսուրսներ,
2. նպատակային լսարան,
3. զբոսաշրջության ինֆրաստրուկտուրաները (ճոպանուղի, ճանապարհներ, հյուրանոցներ, փրկարարական ծառայություններ):

Էկոզբոսաշրջային երթուղի նախագծելու համար կարևոր փուլերից է ընտրված տարածքում էկոզբոսաշրջության զարգացման բնական ռեսուրսների ճիշտ գնահատումը: Ամփոփ վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ կարող է հանգեցնել տվյալ օբյեկտի վաղաժամ մահվանը: Այս տեսանկյունից ստեղծվել են ձեռնարկներ, որոնց հիմնական նպատակը էկոլոգիական դաստիարակությունն է: Կարծում են, որ մեզանից յուրաքանչյուրը սրտացավ է պահպանել այն մեծ ժառանգությունը, որ մենք այսօր կրում ենք մեր երկրի տարածքում: Հայաստանը, չնայած իր տարածքի

փոքրությամբ, շատերին է զարմանք պատճառում իր կենսաբազմազանությամբ: Հայաստանը հարուստ է այնպիսի եզակի ռեսուրսներով, ինչպիսիք են սոսիների բնական պուրակը, սյունածև բազալտները, հանքային աղբյուրները և այլն: Երկրագնդի վրա քիչ վայրեր կան, որտեղ մնացուկային վիճակում պահպանվել են հնագույն ֆլորայի ներկայացուցիչները: Այդ վայրերից է Սոսու պուրակը Հայաստանի հարավ- արևելքում՝ Սյունիքի մարզում: Հայաստանի բնական արգելանոցներից են «Էրեբունի» արգելոցը, «Խոսրովի անտառը», «Շիկահողը»: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր առջև դրված նպատակը: «Էրեբունի» արգելոցի պահպանման նպատակը հացազգիների վայրի ազգակիցների պահպանությունն է, «Խոսրովի անտառ» արգելոցի նպատակը՝ Ազատ գետի ջրային պաշարների, զիհուտների, կաղնուտների, լեռնային չորակայուն բուսականության, հազվագույտ կենդանիների և բուսատեսակների պահպանումը, իսկ «Շիկահող» արգելոցինը՝ կաղնու, բոխու և կաղնուտաբոխուտային անտառների, արևելյան հաճարենու, հատապտղային կենու, արևելյան սոսու և կենդանիների պահպանությունը: Համենմատության համար նշենք, որ «Խոսրովի անտառ» արգելոցի բուսաշխարհն ընդգրկում է մոտ 1800 տեսակ ծաղկավոր բույսեր, այսինքն՝ Հայաստանի բուսաշխարհի (մոտ 3500 տեսակ) կեսից ավելին: 1978 թ. հիմնադրվեց «Սևան» ազգային պարկը, որի նպատակը լճի քաղցրահամ խմելու ջրի, ձկան պաշարի, բնության և պատմաճարտարապետական համալիրների պահպանությունն է, հանգստի և զբոսաշրջության կազմակերպումը: Աշխարհի շատ զարգացած երկրներում զբոսաշրջիկների մեծ մասը ցանկանում է կազմակերպել իր հանգիստն այնպիսի վայրերում, որոնք հեռու են քաղաքի աղմուկից և էկոլոգիապես մաքուր են: Այդ պատճառով նրանք ձգտում են հանգիստն անցկացնել մարդու կողմից չապականված կամ հնարավորինս քիչ վնաս կրած վայրերում: Նման վայրերից են արգելանոցները, արգելավայրերը, ազգային պարկերը, բուսաբանական այգիները և այլն: Որպեսզի երկար վայելենք բնության մեզ տված բարիքները, պետք է հարգանքով վերաբերվենք շրջակա միջավայրին և հարգենք մեր շրջապատը: Մեր անփույթ վերաբերմունքը հանգեցրեց Պարզ լճի աղտոտմանը: Շրջակա միջավայրի աղտոտվածությունը նվազեցնում է շրջապատի գեղագիտական նշանակությունը: Ավելին, այնպիսի վայրեր, ինչպիսիք են արգելոցները, դարձյալ որոշ չափով կրճատում են զբոսաշրջիկների այցելությունը: Այդ պատճառով բազմաթիվ երկրներում ստեղծվել են ազգային այգիներ, որտեղ կան համապատասխան պայմաններ զբոսաշրջիկների պահանջները բավարարելու համար: Որքան էլ այս աշխարհը հարուստ լինի բնության հրաշա-

լիքներով, այդուհանդերձ պետք է չմոռանալ բնության պահպանության մասին, քանզի ինչպես յուրաքանչյուր կենդանի օրգանիզմ, այն նույնպես խնամքի կարիք ունի: Ինչ վերաբերում է էկոզբոսաշրջությանը, ապա վերջինս գոյություն չի կարող ունենալ առանց բնապահպանության:

Գրականություն

1. Մարուխյան Ռ. Զ., Յովսեփյան Ա. Ա. Մարդու էկոլոգիական կուլտուրան, Արևիկ, Երևան, 2005
2. Զորին Ի. Վ., Կվարտալնով Վ. Ա., Տուրիստիկա, Անտարես, Երևան 2006 (թարգմ.՝ Ռ. Մինասյան)

Է.Սահակյան
ԵՊԼՀ,

Ֆիզդաստիարակության
և քաղաքաշտպանության
ամբիոնի ավագ դասախոս

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Էկոլոգիա՝ (ապրելավայր-լոգիա) գիտություն է կենդանի օրգանիզմի և միջավայրի պայմանների փոխհարաբերությունների մասին: Էկոլոգիան բաժանվում է 2 խմբի՝ աուտոէկոլոգիա, որն ուսումնասիրում է առանձին բույս կամ կենդանի, և սինէկոլոգիա, որն ուսումնասիրում է բուսական կամ կենդանական համակենցաղությունն ամբողջությամբ: Էկոլոգիան բաժանվում է տարբեր ճյուղերի, որոնցից կարևորն է բույսերի և կենդանիների էկոլոգիան: Բույսերի էկոլոգիան ուսումնասիրում է միջավայրի պայմանների ազդեցությունը բույսերի ձևի, կառուցվածքի և տեղաբաշխման վրա: Օրգանիզմը ենթարկվելով միջավայրի էկոլոգիական գործոնների (լույս, ջերմություն, խոնավություն) ազդեցությանը՝ ինքն էլ իր հերթին ներգործում է նրա վրա: Բնության մեջ յուրաքանչյուր տեսակ շնորհիվ իր անհատական ֆիզիոլոգիական առանձնահատկությունների, էվոլուցիայի ընթացքում հարմարվել է էկոլոգիական որոշակի գործոնների՝ օրինակ հողում սողայի բարձր քանակությունը թունավոր է ծաղկավոր բույսերի համար, սակայն Արարատյան դաշտում բորակաթթուն աճում է միայն այդպիսի հողերում: Բույսերը տարբեր ռեակցիա ունեն մաս էկոլոգիական այլ գործոնների՝ ջրի, լույսի, հողի նկատմամբ (հիդրոֆիտներ, լույսասերներ, ստվերասերներ): Կենդանիների էկոլոգիան ուսումնասիրում է կենդանիների առանձնահատկությունները, պոպուլացիաների քանակը և տեղաբաշխումը՝ կախված միջավայրի փոփոխվող պայմաններից: Էկոլոգիական հետազոտությունները կարևոր են էվոլուցիոն ուսմունքի մշակման, ինչպես նաև կենդանիների և բույսերի արդյունաբերության նշանակության, հատկապես ձկնարդյունաբերության և արժեքավոր մորթի ունեցող կենդանիների բուծման համար:

Այսօր էկոլոգիան ոչ միայն մեկն է տարբեր բնագավառներում մարդու գիտական գործունեության տեսակետից, այլ այն մոտեցումն է ամբողջ մարդկության ժամանակակից զարգացմանը, տնտեսության, քաղաքականության, կուլտուրայի և կրթության բնագավառներում: Էկոլոգիայի հիմնական նպատակն է տուժած բնական համակարգերի վերականգնման ճանապարհների որոնումը: Այս խնդիրը իրագործելու համար բավարար չէ ունենալ այնպի-

սի մասնագետներ, որոնք տիրապետում են օրինակ՝ քիմիական, կենսաբանական և աշխարհագրական էկոլոգիական պրոբլեմներին, այլ մասնագետներ, որոնք տիրապետում են էկոլոգիա գիտակարգի տեսական և գործնական հիմունքներին: Էկոլոգիական կրթությունը անբաժանելի է էկոլոգիական դաստիարակությունից: Էկոլոգիական դաստիարակությունը գիտակցության և վարվելակերպի միասնությունն է: Այդ միասնությանը կարելի է հասնել կենդանական աշխարհի միասնության բազմազան տեղեկատվական մեթոդներով և այդ կենդանական աշխարհի համար մարդու պատասխանատվության բարձրացմամբ:

Բնության պաշպանությունը պետական և հասարակական միջոցառումների համալիր է, որի նպատակն է պահպանել բնական հարստությունները, նպաստել դրանց վերարտադրմանը և ապահովել արդյունավետ օգտագործումը ժողովրդական տնտեսության մեջ: Բնական ռեսուրսների օգտագործման ժամանակ մարդու գործունեությունը անխուսափելիորեն հանգեցնում է շրջապատող բնության փոփոխությանը: Դրական ներգործության հետ մեկտեղ (վայրի կենդանիների ընտելացում, բույսերի նոր տեսակների ստեղծում և աճեցում, հողերի բերրիության բարձրացում և այլն) այն ունենում է նաև բացասական հետևանքներ՝ նյութերի շրջապատույթի բնական ընթացքի խախտում, բնության վերականգնող ուժերի վնասում, վայրի կենդանիների, թռչունների ու ձկների ոչնչացում: Օրինակ՝ 1980թ. Ձելենագորսկ քաղաքի մոտ տայգայում մոծակների ոչնչացնելու համար ուղղաթիռից դեղանյութ շաղ տվեցին: Մեկ շաբաթ հետո մոծակները նորից լցվեցին, իսկ մի քանի ամիս թռչունների ձայն չէր լսվում:

Ծովերի և գետերի աղտոտության 26 տոկոսը կազմում է վթարի հետևանքով նավթի և նավթամթերքի արտանետումը: Տարվա ընթացքում 1.5 միլիոն տոննա նավթամթերք լցվում է գետերի և ծովերի մեջ: 1981թ. Անգլիական «Գլոուբ Ասիմի» նավից Կլայպեդա նավահանգստի մոտ թափվեց 16 000 տոննա նավթ, իսկ Ալյասկայի ափին Ամերիկական «Էսկոն Վալդիս» նավից՝ 40000 տոննա:

1997թ. ճապոնիայի ափերի մոտ խորտակված Ռուսական «Նախտոկա» նավը արտանետեց 5000 տոննա նավթ: 2007թ. մարտին Նիժնի Նովգորոդ քաղաքի մոտ վթարի ենթարկվեց նավթի խողովակը, աղտոտվեց շրջակայքը: Այստեղից ոչ հեռու գտնվում էր արհեստական լիճ, որտեղ ձուկ էին աճեցնում, (չհաշված մյուս վնասները) այդ լճից հանեցին 70 տոննա սատկած ձուկ: Հարավսլավիայի պատերազմի ժամանակ ամերիկացիները օգտագործում էին ռումբեր, որոնց միջուկները պատրաստված էին ուրանից (ուրանը 2-3 անգամ ամուր է պողպատից): Այդ միջուկների ռադիոակ-

տիվ ճառագայթումը 3.4 միլիկյուրի է: Ումբակոծությունից հետո տեղանքի ռադիոակտիվ ճառագայթումը 10 միլիռենտգեն ժամ էր Սերբիայում, Չեռնոգորեում և Կոսովոյում, որը 1000 անգամ շատ է սովորականից: Այդ նույն պատերազմի ժամանակ լիցքավորող օդանավի օդաչուն ստիպված վայրէջքին պատրաստվելու ժամանակ 350մ բարձրությունից 50000լ ավիովառելիք թափեց Խորտոբադի ազգային պարկի վրա:

Բնության պահպանության միջոցառումներից են՝ բնական հարստությունների օգտագործման ընդհանուր կարգավորումը (բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև առանձին տեսակների և այլն) ջրամբարների և օդի պահպանումը աղտոտվածությունից, կենդանիների և բույսերի տեսակների քանակական կարգավորումը, կենդանական և բուսական աշխարհի հարստացումը (անցյալ դարի կեսերին Օմնեգա լճից Սևան բերվեց սիգ ձուկը որը մեծ հաջողությամբ այստեղ աճեց), արգելանոցների կազմակերպումը, ազգային պարկերի ստեղծումը:

Հայաստանի Հանրապետությունում բնության պահպանության և հարստացման համար 56 000 հեկտար տարածության վրա ստեղծված են Խոսրովի և Դիլիջանի արգելանոցները, վերանայված են որսորդության և ձկնորսության կանոնները և ժամկետները:

Երկրագնդի կլիման հիմնականում կախված է հետևյալ գործոններից՝ ջերմափոխանակումից, խոնավափոխանակումից և մթնոլորտի շրջանառությունից: Ջերմափոխանակումն իր հերթին կախված է արևի ճառագայթումից: Արևի ճառագայթումը լինում է՝ էլեկտրոնազնիսական և մասնիկային բնույթի: Մասնիկային բնույթի ճառագայթումը հիմնականում պրոտոններ են, որոնք Երկրի մոտ ունենում են 300-1500կմ/վ արագություն: Էլեկտրամագնիսական բնույթի ճառագայթումը հիմնականում տեսանելի ճառագայթներ են, իսկ մասնակին՝ ուլտրամանուշակագույն ճառագայթներ են, որոնք մեծամասնությամբ չեն կարողանում անցնել օդոնի շերտով և բարձրացնում են օդոնի շերտի ջերմաստիճանը:

Մթնոլորտի ջերմոցային էֆեկտը մթնոլորտի հատկությունն է՝ բաց թողնել արևի ճառագայթումը և արգելել Երկրի ճառագայթների թափանցումը դեպի տիեզերք: Դրա շնորհիվ երկիրը տաքանում է:

Ուլտրամանուշակագույն ճառագայթները փոքր չափաբաժնով ընդառաջում են D վիտամինի ստեղծմանը և լավացնում են օրգանիզմի ինունիտակենսաբանական հատկությունը: Մեծ չափաբաժնի դեպքում դիմակայում են բջջի նախապատրաստմանը կիսվելու:

Օզոնը (Օ 3) մթնոլորտում շատ քիչ է 2.3-3մմ հաստությամբ հիմնականում 20-25կմ բարձրության վրա: Օզոնի շերտը թույլ չի

տալիս թափանցել ուլտրամանուշակագույն ճառագայթների մեծ մասին, որոնք ակտիվ են կենսաբանական պրոցեսներում և դրանք չեն հասնում Երկիր: Ուլտրամանուշակագույն ճառագայթները շատ փոքր օրգանիզմների վրա կործանարար ազդեցություն են ունենում:

Արդյունաբերության զարգացման հետևանքով շատանում է ածխաթթու գազը օդում, դա ազդում է ոչ միայն մարդու առողջության վրա, այլ նաև մթնոլորտում ճառագայթման կլանման վրա, դրանով նաև օդի ջերմաստիճանի վրա: Ենթադրվում է, որ մթնոլորտի աղտոտման հետևանքով 40 տարի հետո ջերմաստիճանը այնքան կբարձրանա, որ կհալչեն հյուսիսային սառույցները, կողողվեն Անգլիան, Դանիան, Նիդերլանդները, կչորանան մի շարք գետեր և դա կբերի աղետալի հետևանքների:

1986թ. ապրիլի 26-ին 1.26.40 վրկ Չերնոբիլի ատոմակայանի 4-րդ էներգաբլոկի ուրանագրաֆիտային մեծ հզորության եռացող ռեակտորը /ԲՅՄԿ-1000/ պայթեց: Ոչ ոք ոչինչ չէր ուզում ասել, զանգահարել էին Մոսկվա. կարծես թե Չերնոբիլի ատոմաէլեկտրակայանում վթար է եղել: Սկզբից սկսեցին տարհանել տուժածներին, ապա նաև մնացած բնակչությանը: Իհարկե լինում էին սխալներ. պատուհանները և դռները բաց էին, բժիշկները վարակված վայրերում յոդ չէին օգտագործում, բնակիչների մեծ մասը չստացավ յոդ, իսկ գյուղերում՝ ոչ ոք, ավտոբուսները, որոնք տարհանում էին Պրիպյատի բնակչությանը, անցնում էին վարակված վայրով: Այդ օրը քանու ուղղությունը անկայուն էր, դրա համար ռադիոակտիվ յոդի նստվածքները տարածվել էին Կրասնոդարի երկրամասում, Ռոստովի և Աստրախանի մարզերում, Սև և Ազովի ծովերում: Ապրիլի 29-ին Սմոլենսկ քաղաքում ռադիոակտիվ մակարդակը 69մկմ/ժ էր, մարզի հարավում 420, Դեսնագորսկում 220, Ռուլովլի շրջանում 400: Ռադիոակտիվ աղտոտումը ցեզիում –137-ով Ռուսաստանում կազմում էր 1կյ/կմ -ից ավելին 60 000 քառակուսի կմ 7608 բնավայրերով և 3 մլն բնակչությանը: Սկսվեց զանգվածային յոդային պրոֆիլակտիկան և այստեղ պարզվեց, որ 25 մարզերում կալիումի յոդիտի պաշարը 15 տոննա է, իսկ անհրաժեշտ էր 149 տոննա /1 մարդուն 25 գրամ/: Սկսվեց հարավից եկող ուղևորների ճառագայթային ստուգումը, միայն մայիսի 8-ին հիվանդանոց տեղափոխվեց 386 մարդ Մոսկվայում և 119՝ Լենինգրադում: Հունիսի սկզբին հաստատվեցին ռադիոակտիվ վարակման մակարդակը և սահմանները: Վթարի վայրից 30կմ հեռավորության վրա գտնվող բնակավայրերից բնակչությունը տարահանվեց: Այսուամենայնիվ Չերնոբիլի աղետը ավելի քիչ է, քան այն վնասակար դեպքերի գումարային քանակը, որոնք հանդիպում են ամենօրյա կյանքում, օրինակ՝ Նո-

րիլսկում ֆիրմայի տնօրենի աթոռին կայցրել էին ռադիոակտիվ մյուս, մյուսը և Մոսկվայում: Յուժնի-Սախալինսկում երեխաները գտել էին դեֆետասկոպ (մեկը մահացավ, մյուսին բուժեցին): Ջինվորները գտել էին երկու ռադիոակտիվ կտոր՝ մեկը թողել էին տարածքում մյուսը տարել հրամանատարի համար (շատերը հիվանդացան, 5 հոգի մահացավ):

Ինչպես հայտնի է մթնոլորտի ներքին շերտի ռադիոակտիվ ճառագայթումը լինում է բնական և արհեստական: Բնական ճառագայթման հիմնական աղբյուրն է ռադոն 222-ը, որն ունի երկրային ծագում (1.675 ՄՁ, որը կազմում է 69.47%/) և տիեզերական ծագումով (0.315ՄՁ, 13%): Սովորական պայմաններում արհեստական ծագումով՝ (0.421 ՄՁ, 17.46%), որից բժշկական 0.4 ՄՁ, 95.1%, ռադիոակտիվ նստվածքներ 0.02ՄՁ, 4.75%, ատոմային էներգետիկա 0.001ՄՁ, 0.23%:

Հիմնականում արհեստական ռադիոակտիվ աերոզոլները ստեղծվում են միջուկային պայթյունների ժամանակ: Միջուկային ռազմամթերքների փորձարկումները մթնոլորտում 1954-1958թթ. և 1961-1962թթ. կատարում էին Մեծ Բրիտանիան, ԱՄՆ և ԽՍՀՄ-ը: Այդ փորձարկումներից ստացված հիմնական ճառագայթման աղբյուրն էին հանդիսանում ածխածին 14-ը, ցեզիում 137-ը, ցերկոնիում 95-ը և ստրոնցիում 90-ը: Փորձարկումները կատարվում էին հյուսիսային կիսագնդում: Ինչպես երևում է ՄԱԿ-ի գիտական կոմիտեի տվյալներով կազմված գրաֆիկներից, փորձարկումներից հետո միջուկային պայթյունների մեկ տարում 90 Մգտ գումարային հզորության պայմաններում Արգենտինայում ստրոնցիում 90-ի պարունակությունը սննդամթերքում 0.13բբ/կգ, էր, իսկ Նյու-Յորքում 0.6բբ/կգ /այսինքն 4.61 անգամ ավելին/: Ցեզիում 137-ի պարունակությունը սննդամթերքում Արգենտինայում 0.7բբ/կգ էր, իսկ Դահիայում 8.8բբ/կգ /այսինքն 12.57 անգամ ավելի/:

Եթե այժմ ցերկոնիում 95-ը, ցեզիում 137-ը և ստրոնցիում 90-ը ճառագայթային աղբյուր չեն հանդիսանում (ցեզիում 95-ի կիսատրոհման պարբերությունը 65 օր է, ցեզիում 137-ի և ստրոնցիում 90-ի կիսատրոհման պարբերությունը մոտավորապես 30 տարի է), ածխածին 14-ը 2000թ. կորցրել է միայն իր ակտիվության 7%, նրա կիսատրոհման պարբերությունը 5730 տարի է, և նա մնում է որպես ռադիոակտիվության աղբյուր:

Չերնոբիլի ատոմաէլեկտրակայանի աղետից հետո պարզվեց, որ վթարի հետևանքով ռադիոակտիվ աղտոտումը բոլորից շատ ազդում է սննդամթերքի վրա: Չերնոբիլի աղետի փորձից ելնելով մասնագետները ռադիոնուկլիդների նվազեցման համար խորհուրդ են տալիս.

- մաքրել կարտոֆիլի և ճակնդեղի կեղևը /որը 30-40%-ով քչացնում է ցեզիում 137-ի և ստրոնցիում 90-ի պարունակությունը/, որից հետո եփել ու աղ անել (որը քչացնում է այդ իզոտոպները 2 անգամ),
- Մուկվայի ապրողներին՝ չուտել երիկամներ, թոքեր, լյարդ:
- միսը և ձուկը լվանալ և քացախով մշակել,
- շատ օգտագործել շաղգամ,
- շատ օգտագործել վարսակ և հնդկացորեն,
- հիանալի հակաճառագայթային միջոց է գազարը, այն անհրաժեշտ է ավելացնել բոլոր ուտեստներին եփած և հում վիճակներում,
- քիչ օգտագործել եփած ձու, որովհետև ստրոնցիումը հավաքվում է ձվի կեղևում և եփելու ընթացքում անցնում է սպիտակուցի մեջ,
- ռադիոնուկլիդները բոլորից շատ լինում են մթերքներում, որից պատրաստում են արգանակ, ոսկրայուղ, սառնախյուս (խոլոդեց):

Օրգանիզմը ռադիոնուկլիդներից մաքրելու համար անհրաժեշտ է օգտագործել կարմիր ճակնդեղ: Նրա մեջ կա նյութ, որը կանգնեցնում է քաղցկեղի բջջի աճը և հանում է ռադիոնուկլիդ /бетанин/, ճակնդեղը օգտագործում են հում, եփած և խորոված: Այդ որակն ունի նաև կաղամբը, որի օգտագործումից առաջ անհրաժեշտ է հանել վերևի թերթերը և կաղամբակոթը: Ճառագայթային հիվանդության դեմ որպես պրոֆիլակտիկ միջոց օգտագործում են սև ազնվամորին: Ճապոնիայում մինչ այսօր համարում են, որ այն մարդիկ, որոնք օգտագործել են կանաչ թեյ շատերը մնացել են կենդանի: Թեյի համար խորհուրդ է տրվում հետևյալ բաղադրամասերը՝

- մեկ թ/գ թեյ
- 2 ճ/գ սև ազնվամորի և արոսի սևապտուղ
- եռացնել 2 բաժակ ջրով և ավելացնել մեղր /ըստ ճաշակի/:

Գրականություն

1. Радиация, доза Научный комитет ООН, М. 1990.
2. Большая Советская Энциклопедия том 29, М. 1978.
3. Гражданская защита, М. 2001.
4. Հայկական Սովետական հանրագիտարան Գ.2, Երևան, 1976թ.

*З.Аветикян
ЕГЛУ,*

ст. преподаватель кафедры физического
воспитания и чрезвычайных ситуаций

ПРИРОДООХРАНА И СТАБИЛЬНОЕ РАЗВИТИЕ ОБЩЕСТВА

Человек, который сравнительно не так давно дрожал в полутьме своей пещеры от страха перед громом и дикими зверьми, ныне почти во всех отношениях вправе чувствовать себя хозяином Земли. Выросли творения человека, он преобразил окружающую среду и создал такие сооружения, о которых его предки не могли бы даже мечтать. Основой всей деятельности человека стал технический прогресс. Однако в процессе своего созидания человек столкнулся с парадоксальной ситуацией: воздействуя на окружающую среду, он поставил под удар судьбы миллионов своих сограждан и вынужден обходиться оценками весьма приблизительными о дальнейшей своей судьбе. Как следствие, возникла необходимость составления прогнозов своей деятельности. Одним из таких является региональный план развития человечества.

В докладе ЮНЕСКО ГЕО-2000 дается порегиональный обзор состояния окружающей среды, а также стратегия реагирования на ее проблемы.

Так для Африки, определенной проблемой населения является бедность, хроническая нехватка продовольствия, недостаток питьевой воды и топлива для приготовления пищи.

Для Азиатско-Тихоокеанского региона характерны самые высокие в мире темпы роста экономики.

Второй особенностью проблем региона является высокая роль в нем стихийных бедствий: землетрясений, наводнений, ураганов, лесных пожаров, а также ветровая эрозия почв. Показательным для этого региона является вырубка леса. Девственных лесов здесь практически не осталось.

Характерной чертой является и быстрый рост городов-мегаполисов.

Латинская Америка выделяется в мире как регион, сохранивший наибольшие запасы пригодных для обработки земель и наибольшие площади естественных лесов, сосредоточенных в Амазонии.

Северная Америка – регион наиболее высокопроизводительной экономики и самого высокого энергопотребления-соответственно, выбросы продуктов сгорания органики здесь максимальные.

Поскольку в почву вносится большое количество химических удобрений, здесь очень высокий уровень загрязнения окружающей среды химическими токсинами. В США и Канаде природо-охранное законодательство впервые в мире возведено в ранг государственной политики, а торговля квотами против загрязнений стала частью бизнеса.

Характерным является то обстоятельство, что площадь национальных парков возросла в США до 9% от территории страны, а в Канаде – до 15%.

Западно-Азиатский регион. Характерной особенностью является очень высокий уровень опустынивания, острый недостаток пресной воды и высокая степень загрязненности земель в районе Персидского залива продуктами нефтедобычи. Экономические проблемы региона усугублены высоким ростом населения.

Полярные регионы, особенно в России, вызывают особое беспокойство из-за радионуклеидов и тяжелых металлов выброшенных в атмосферу. Это происходило во время ядерных испытаний и в ходе промышленной эксплуатации рудных месторождений. Для полярных районов характерны также так называемые “озонные дыры”, виновником которых считают выбросы искусственно синтезированных фреонов.

Важнейшей проблемой является уничтожение лесных ресурсов. Так, леса истреблены сейчас на 80% от площади, покрывающей Землю в доцивилизированный период. (5-6тыс. лет назад). Только за 5 лет с 1990 по 1995г. на Земле исчезло 65 млн. га леса, а искусственные посадки в разных странах составили всего 9 млн. га., ныне в Красную книгу природы занесены почти 1100 видов млекопитающих. Известно, что разнообразие видов растений и животных поддерживает естественные

экосистемы, от которых в конечном счете зависит существование человека, так как они улучшают качество почвы, очищают воду и воздух.

Одной из важных экологических проблем становится урбанизация. Уже половина населения мира, а в Европе и в Америке 70%, живет в городах. Экологическое воздействие городов на окружающую среду хорошо видно из космоса. Экологический след может превышать площадь самого города более чем в 100 раз. Большое воздействие на окружающую среду оказывает транспорт.

Катастрофическая ситуация сложилась и с ресурсами пресной воды на Земле. За последние десятилетия подвергались опасным загрязнениям морские и прибрежные зоны Мирового океана. В результате загрязнения поверхности океанов и морей нефтяной пленкой сокращается продуктивность фитопланктона, являющегося основой всех пищевых цепей в морях. Достиг предела вылов рыбы в мире. Быстрыми темпами исчезают ценные виды рыб.

Еще за два с половиной тысячелетия до нас считали причиной бедности людей их численность на Земле. В 1992г. народонаселение Земли достигло 6 млрд. человек. Если такой темп увеличения популяции сохранится, то к концу XXI века численность населения достигнет 10 млрд. Однако демографическое управление при ООН опубликовало отчет, согласно которому темпы прироста населения в последние десятилетия неуклонно снижаются. Сможет ли человечество прокормить 11-12 млрд. человек? В настоящее время в распоряжении человечества находятся 11млрд. га пахотной земли, которая может прокормить 47 млрд. человек. Правда, такие расчеты выглядят сугубо абстрактными, так как освоение новых земель, пригодных для сельскохозяйственного производства, требует огромных финансовых средств.

В ряде стран проводится сознательная демографическая политика (США, Китай, Япония). В наши дни человечество может сознательно регулировать свою численность. Наша цивилизация устроена так, что элемент выгоды является пока определяющим в формировании ее образа жизни.

Вопросы здоровья, удобства и многие другие чаще всего отходят при этом на второй план. Именно сознательное регулирование количества детей человеком, пользующимся всеми достижениями культуры и научно-технического прогресса, позволят достигнуть оптимальной численности человеческого рода.

Неконтролируемое и несогласованное с законами биосферы развитие техники (загрязнение воздуха, воды, почвы, шум и вибрация, аварии и несчастные случаи, истощение запасов пресной воды, ископаемого топлива, руд, нерациональное использование почвы, радиоактивные загрязнения и др.) привело к развитию так называемой “линейной” экономики.

Согласно учению академика А. П. Виноградова, биосфера организована по принципу безотходного производства: продукты жизнедеятельности одних организмов жизненно необходимы другим. Все утилизируется в великом природном круговороте. Изучение биологических процессов в природе привело к разработке и внедрению безотходных технологий. Поэтому перевод современного производства, современной экономики на циклическую основу является экологически грамотным решением, получившим название “циклическая” экономика.

Одна из глобальных экологических проблем – сохранение биоразнообразия. В настоящее время мы говорим о сохранении разнообразия экосистем, поскольку каждый вид является необходимым элементом соответствующей экосистемы. Сохранение разнообразия экосистем – задача, взаимосопряженная с сохранением видового разнообразия. В результате роста населения и усиленного развития промышленности и сельского хозяйства, Земля по некоторым в полне корректным данным ежегодно теряет 100 видов различных живых существ. Сокращение видового биологического разнообразия является глобальной экологической проблемой.

Серьезную озабоченность вызывает состояние дождевых тропических лесов. Они тянутся широкой полосой вдоль экватора и служат местом обитания миллионов видов растений и животных. По мнению многих ученых, именно от этих лесов

зависит климат Земного шара. Их разрушение ведет как минимум к значительному повышению содержания в атмосфере двуокиси углерода, что в свою очередь вызывает “парниковый эффект”.

Решение энергетической проблемы является важнейшей задачей всего человечества. Каждый год в мире потребляется столько нефти, сколько ее образуется в природных условиях за два миллиона лет.

В экономически развитых странах прослеживается два основных направления в решении энергетических проблем:

- энергосбережение и снижение энергоемкости общественного продукта,
- усиление внимания к широкому освоению возобновляемых источников энергии (энергии Солнца, биомассы, ветра, подземных термальных вод).

Целью широкого внедрения технологий возобновляемой энергетики повсюду в мире позволяет снижать экологические нагрузки, обеспечивает экологическую безопасность.

Если попытаться резюмировать наиболее распространенные точки зрения ученых на причины экологического кризиса, то виновником его оказываются несовершенные технологии, “линейное” экономическое развитие и “взрыв демографических бомб”.

Большую нагрузку на окружающую среду создают современные животноводческие комплексы, выбросы которых порой превышают допустимые нормы.

С помощью методов генной инженерии создаются новые виды растений, способных усваивать азот из атмосферы. Сейчас выращивают микроорганизмы для очистки морского побережья и морской поверхности от нефти, а также для ускорения разложения бытовых и промышленных отходов.

Одно из наиболее важных достижений биотехнологий в медицине—это производство ряда антибиотиков и вакцин на основе методов ферментизации, в частности инсулина.

Необходимо учитывать коммерческое значение природы, её эстетическую ценность, оберегать и восстанавливать её первоначальное состояние за счёт спортивного и туристического бизнеса и т.п. Соответственно любой нанесённый ей ущерб

затрагивает и коммерческие интересы, хищническая эксплуатация лесов, озёр, пляжей, мест зимнего и летнего отдыха наносит большой урон.

Необходимо поставить под жесткий контроль изготовление мебели из ценных тропических пород деревьев (например красного и черного и тд.). Эти меры будут способствовать сохранению тропических лесов, снижению воздействия “парникового эффекта”, который способствует повышению температуры на Земле, что приводит к таянию ледяных покровов в Антарктиде и Арктике и повышению уровня Мирового океана, грозящего катастрофическими последствиями для человечества.

Необходимо строго лимитировать, а в некоторых районах земли вовсе запретить охоту и рыбную ловлю.

На мой взгляд, важное значение имеет также повсеместное деревонасаждение, особенно в городах, где так чувствуется нехватка чистого воздуха, высокая запылённость, необходимость укрыться в летний зной от жары, создание садов и лесопарков, куда можно вывести на прогулку детей, создать необходимые условия отдыха пенсионерам и самому отдохнуть после тяжёлого трудового дня. При строительстве высотных домов создавать вокруг их зелёные зоны.

В настоящее время охраняемых территорий в мире, заповедных зон, национальных парков, насчитывается 44 тысячи, и они покрывают почти 10% земной поверхности. Эти территории, сохраняющие природные сокровища и историческое наследие, являются генетической кладовой, гарантом здорового будущего планеты и её обитателей.

Литература

1. Ф.Шебек - “Вариации на тему одной планеты”, Типография “Атэнеум”, Будапешт, Венгрия, 1972г., с. 243-245
2. Л.И. Егоренков, Б.И. Кочуров – “ГЕО Экология” – М., “Финансы и статистика”, 2005г., стр. 203-260

*Р.Геворкян
ЕГЛУ,*

доцент кафедры ЮНЕСКО по правам
человека и демократии

ЭКОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ЧЕЛОВЕЧЕСТВА

В течение своей длительной жизни на Земле человечество в значительной степени зависело от солнца как источника энергии. Его потребность в энергии, в основном в пище, прямо или косвенно удовлетворялась фотосинтезом. Только совсем недавно человек попал в сильную зависимость от ископаемого топлива. Сегодня глобальная среднегодовая потребность в энергии составляет ~8 трлн. ватт. Иными словами для обеспечения нужд одного жителя Земли нужно 12 человек обслуживающего персонала. Если наш образ жизни будет и дальше так развиваться, как сейчас, то в будущем потребность в энергии станет громадной. Если производство продовольствия будет идти в ногу с ростом населения, то к 2010 г. производство азотных удобрений должно увеличиться в 100 раз. Одно лишь это потребует около 20% объёма ныне производимой энергии. Опреснённая вода, которая часто рассматривается как неотъемлемая часть будущего, для своего получения требует громадных затрат энергии. Среднегодовое потребление энергии увеличивается на 5.7%. Если этот темп сохранится, то к 2010 г. расход энергии по сравнению с 1980 г. увеличится в 4.5 раза. Основным источником получения энергии в мире, дающим 97% её количества, является ископаемое топливо, в том числе 38% составляет уголь, 19%-природный газ и 10%- нефть. 2% электроэнергии вырабатывается на ГЭС, а другие источники, такие как ядерный распад, древесина и прочие вырабатывают 1% энергии. Нефти хватит ещё приблизительно на 80 лет. Все запасы нефти разведаны. Разрабатываемые сейчас новые месторождения в Северном море обладают ограниченными запасами. Эти запасы недостаточны для того, чтобы обеспечить предполагаемый рост потребления энергии в Западной Европе, который удваивается каждые 8-10 лет. 2/3 добываемых запасов

нефти и разрабатываемых сосредоточены в Персидском заливе. Остальные находятся в России, Северной Америке и Африке. Нефтяная проблема ещё больше усложняется в результате низкоэффективных способов добычи нефти. Местами из недр земли берётся только 30-35% нефти. Поскольку цены на неё растут, экономически эффективной может стать вторичная добыча, что позволит поднять на поверхность 40-45% нефти. Запасы природного газа более ограничены. Они приблизительно равны запасам энергии оставшихся угольных месторождений. Около 1/5 всех запасов природного газа сосредоточено в Северной Америке, 1/3 в России. Основным источником энергии ископаемого топлива является каменный уголь. Из всех мировых запасов угля 52%- сосредоточены в России, 20%- в США, 9%- в Китае, 8%- в Канаде, 5%- в Западной Европе, остальное - в Океании, Центральной и Южной Америке. Около 97% угля можно извлечь только при помощи сооружения глубоких шахт. Хотя угля и много, он не является дешёвым источником энергии. Перевозки, труд, капиталовложения при строительстве новых глубоких шахт, контроль за загрязнением воды и воздуха - всё это увеличивает стоимость угля. Двумя другими источниками углеводородов являются гудрон и сланцы. Месторождения гудрона имеют ограниченное распространение и сосредоточены в Канаде, стоимость же получения нефти из сланцев очень велика. Ядерную энергетику преподносят нам как грядущий источник энергии, но производимая ею электроэнергия по сравнению с потребностью незначительна. Будущее ядерной энергетики омрачено проблемами безопасности производства и охраны окружающей среды. Несмотря на все меры предосторожности, предпринимаемые на атомных электростанциях, они выделяют незначительные количества радиоактивных веществ в воду и атмосферу. В то же время атомные электростанции снимают часть нагрузки с окружающей среды. Сейчас каждый третий киловатт час электроэнергии в Германии дают АЭС. Таким образом, до 1986 года они избавили окружающую среду от выделений 2, 7 миллиона тонн двуокиси серы, 1, 4 миллиона тонн окислов азота, 300 тысяч тонн пыли и 150 миллионов тонн двуокиси углерода, которые были бы неизбежны при выработке

этой энергии из ископаемого топлива и нанесли бы существенный ущерб окружающей среде. Другими доступными, но гораздо менее существенными источниками получения энергии являются гетеотермальные, гидроэнергетические мощности. Гетеотермальная энергия, поступающая из горячих ключей и в виде сухого пара, может рассматриваться как незначительный источник. Приливная энергия даёт незначительную часть для получения гидроэнергии. Строительство плотин ограничено, так как возникают экологические и эпидемиологические проблемы. Несмотря на связанные с добычей энергии проблемы, монополистические объединения ставят своей целью увеличение производства и повышение спроса на энергию. Основной упор должен делаться на сохранение энергии посредством более эффективного использования. Уже давно признана необходимость планирования будущих потребностей в энергии. Это выразилось в учреждении Мировой энергетической конференции, заседания которой собираются каждые три года для обсуждения текущих энергетических проблем. Пути более эффективного использования энергетических ресурсов: переработка вторичного сырья (алюминиевые консервные банки), экономия энергии в промышленности и в домашнем хозяйстве, эффективное использование изоляционных материалов, предохраняющих дома от утечки тепла, применение сверхпроводимых материалов при строительстве линий электропередач, что позволяет передавать энергию почти без потерь. В будущем цена энергии значительно возрастёт, поскольку по мере истощения легко доступных источников топлива добыча его станет намного дороже. В течение последних десятилетий ядерная энергия рассматривается как всё более важный источник электроэнергии. Опасности ядерной энергетики не должны заслонять от нас её преимущества. Ядерные реакторы при правильной эксплуатации являются безопасными. Они расходуют сырьё (уран и плутоний), которое ни для чего другого не пригодно. К тому же из малого количества урана можно получить большое количество энергии, что даёт возможность создать долгосрочные запасы ядерного топлива. Таким образом, несмотря на ряд проблем, все-таки

ядерная энергетика, на наш взгляд, является основным источником энергии для будущих поколений.

Резюме

Автор в своей статье останавливается на основных проблемах экологии современного общества. Анализируя современное состояние экологии, автор статьи приходит к выводу, что для будущих поколений основным источником энергии, несмотря на ряд проблем, будет ядерная энергетика.

Литература

1. Майкл Китинг. Программа действий. Повестка дня на 21 век и другие документы
2. Конференции в Рио-де-Жанейро в популярном изложении /сост..Женева, Швейцария. – 1993
3. Брагина С.В., Игнатович И.В., Сарьян А.В. Взаимоотношения общества и природы (Краткий исторический очерк). / Под ред. Н.Г. Рыбальского, Е.Д. Самотесова. – М.: НИИ-Природа, 1999.
4. Рахилин В.К. Общество и живая природа: Краткий очерк истории взаимодействия. – М.: Наука, 1989.
5. Федцов В.Г, Федцова А.В. и др. “Экология”, Москва 2004

**Պ. Հանրարժույթի
Ի. Դանիելյան
ԵՊԼՀ, ՕԼՖ**

Գիտական ղեկավար՝ Լ.Միլիտոսյան,
ԵՊԼՀ, մանկավարժության և
լեզուների դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի ղոցենտ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հասարակության դաստիարակության և ընդհանրապես ուսումնական ողջ համակարգի նպատակը մարդու ձևավորումն է, այնպիսի մարդու, որն առաջին հերթին վտանգ չի ներկայացնում իր, ապա շրջակա միջավայրի համար, ունակ է պաշտպանելու ինքն իրեն, սոցիումին և բնությունը արտաքին վտանգներից:

Գիտամանկավարժական գրականության մեջ սահմանված է էկոլոգիական դաստիարակության նպատակը.

1. բնության, նրա հարստության, շրջակա միջավայրի նկատմամբ խնայողական և հոգատար վերաբերմունքի ձևավորում.
2. անձի ակտիվ կենսադիրքորոշման մշակում, որը դրսևորվում է բնության նկատմամբ գիտակցական վերաբերմունքի մեջ՝ որպես ամենօրյա վարքի կանոն:

Էկոլոգիական դաստիարակության նպատակը կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից՝

ա) սոցիալական, որն արտահայտում է հասարակության պահանջը դաստիարակության նկատմամբ:

բ) անհատական, անձնային, որին հասնելու համար կարևոր նշանակություն է ձեռք բերում անձի էկոլոգիական մտածողության և էկոլոգիական պատասխանատվության ձևավորումը:

Այս վերլուծությունը ցույց է տալիս, որ էկոլոգիական դաստիարակության նպատակներն իրականացնելու համար հարկավոր է ելնել հետևյալ սկզբնական դրույթներից.

մարդը բնության մի մասնիկն է, և նրա զարգացումը բնությունը վերափոխող գործոն է,

մարդկության պատմությունը բնության պատմությունն է, և սրա վերակերպավորումը մարդկային կյանքի հիմքն է կազմում, բնության օրենքներն առաջնային են,

էկոլոգիական դաստիարակություն և էկոլոգիական կուլտուրա հասկացություններն օգտագործվում են՝ բնութագրելու մարդու հարաբերությունը բնության նկատմամբ:

Էկոլոգիական դաստիարակության նպատակը համադրվում է անձի համակողմանի զարգացման ընդհանուր դաստիարակության իդեալի հետ, այնպիսի անձի, ով ընդունակ է շրջակա միջավայրի հետ ներդաշնակության մեջ ապրելու:

Էկոլոգիական դաստիարակությունը մանկավարժական գործընթացի մի մասն է, և նրա համալիր բնույթից էլ բխում են նրա խնդիրները.

- ✓ **մարդ - հասարակություն - բնություն** ամբողջական համակարգի նկատմամբ դարձնելով կոնկրետ անհատական վերաբերմունքի, բնության հետ շփվելու պահանջմունքի, պատասխանատվության և էկոլոգիական աշխարհայացքի ձևավորում,
- ✓ նրանց անձնական մասնակցությունն այդ համակարգի գործունեությանը,
- ✓ էկոլոգիական գիտակցության և էկոլոգիական կուլտուրայի
- ✓ ձևավորում,
- ✓ բնության հետ հարաբերությունների կարգավորում,
- ✓ բնության խնայողության անհրաժեշտության համոզմունքների ձևավորում,
- ✓ էկոլոգիական գիտելիքների քարոզչություն,
- ✓ շրջակա միջավայրի գեղագիտական ընկալում և գնահատում:

Ելնելով նշված խնդիրներից՝ պետք է փաստել, որ էկոլոգիական դաստիարակությունը հանդես է գալիս որպես գաղափարների և միտումների իդեալական ամբողջականություն, որը կոչված է հաղթահարելու կրթության և դաստիարակության այնպիսի թերությունները, ինչպիսիք են մի կողմից էկոլոգիական բնույթի դարձնական առարկաների պակասը, մյուս կողմից՝ անձի ձևավորման անհամաձայնությունը:

Էկոլոգիական դաստիարակության խնդիրը դարձնելով կոնկրետ մեջ բնության, շրջակա միջավայրի մասին հասկացությունների ձևավորումն է, գիտելիքների հարստացումը, սովորողների բնաճանաչողական ընդունակությունների, բնապահպանական կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը, բնության նկատմամբ ակտիվ դիրքորոշման ձևավորումը, վարքի նորմաների պահպանումը, պարտքի և պատասխանատվության զգացման պատվաստումը: Այս ամենն իրենց հերթին նպաստում է բնության հետ ներդաշնակվելու ձգտման որակների դաստիարակմանը, որը հարստացնում և ապահովում է ընդհանուր դաստիարակության ողջ գործընթացը: Այն պետք է իրականացնել սկսած վաղ մանկական տարիքից՝ ընտանիքում, նախակրթարանում, հանրակրթական

դպրոցներում և արտադպրոցական հիմնարկներում: Այսօր ընտանիքի և նշված հաստատությունների խնդիրը պետք է լինի երեխայի գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ յուրաքանչյուր մարդ բնության հետ կապված է անտեսանելի թելերով և լրիվ կախման մեջ է նրանից ոչ միայն կենսաբանական, այլև հոգևոր առումով և պետք է նրանից ընդօրինակի ներդաշնակությունը, ռիթմը, համաչափությունը, նպատակահարմարությունը, բարությունը և այլն, որպեսզի նրանք գիտակցեն, որ իրենցից յուրաքանչյուրը բնության մի մասնիկն է և պետք է ենթարկվի այն կարգ ու կանոնին, որը տիրում է բնության մեջ:

Բնության պահպանության գաղափարներով պետք է համակված լինի ողջ մանկավարժական գործընթացը, որի ընթացքում պետք է լուծվեն հետևյալ խնդիրները՝

ա. դպրոցականների էկոլոգիական գիտելիքների զարգացումն իր բոլոր տեսանկյուններով՝ մանկավարժական, տնտեսական, քաղաքական, սոցիալական, բարոյական, գեղագիտական, իրավական, հոգեկան և այլն,

բ. դպրոցականների մոտ էկոլոգիական հարցերի լուծման վերաբերյալ անհրաժեշտ կարողությունների և հմտությունների մշակում:

Այսօր էկոլոգիական կրթության և դաստիարակության խնդիրների այսպիսի ըմբռնումը ոչ միայն դեռևս լիովին չի արտացոլված կրթության բովանդակության մեջ, այլև հայրենի բնության, բուսաբանության, կենսաբանության, քիմիայի և այլ դասագրքերում էկոլոգիայի հարցերի լուսաբանման առումով կան բավականին թերություններ, այն է՝

- ✓ լիարժեք չեն բացահայտված էկոլոգիական խնդիրների հետ առնչվող մարդու գործունեության եղանակներն ու ձևերը,
- ✓ թերի են ներկայացված մարդ - բնություն - հասարակություն կապը և բնական համակարգերի հատկանիշները,
- ✓ չկան էկոլոգիական նշանակությունը բացահայտող անհրաժեշտ օժանդակ ձեռնարկներ,
- ✓ բնագիտության և բուսաբանության դասագրքերում լիովին չեն ընդգրկված տեղեկություններ անհետացող բացառիկ բույսերի և կենդանիների նշանակության մասին,
- ✓ չի մշակված ֆակուլտատիվ պարապմունքների գործնական ծրագիր էկոլոգիայից:

Ինչպես նկատեցինք, էկոլոգիական դաստիարակության խնդիրները բազմազան են և արդիական: Այս խնդիրները պայմանավորված են նաև էկոլոգիական դաստիարակության օրինաչափություններով և սկզբունքներով: Մենք ոչ միայն չենք կարող հրա-

ժարվել բնական պաշարների օգտագործումից, այլև չենք կարող, նույնիսկ, կանգնեցնել նրա օգտագործման օր օրի ահագնացող թափը: Եվ դրա կարիքն էլ չկա, քանի որ օգտագործման թափի ուժեղացումը երբեք էլ չի հասցնի մեզ շրջապատող բնական միջավայրի ոչնչացման, եթե, իհարկե, բնության նկատմամբ ունեցած մեր վերաբերմունքը հենվի երկարաժամկետ էկոլոգիական կանխատեսումների և խելացի, գիտականորեն հիմնավորված տնտեսավարության վրա:

Իրավացի է ասված, որ մարդու համար բնությունը և՛ արհեստանոց է, և՛ տաճար, իսկ մարդը նրանում ակտիվ աշխատավոր է և հրապուրված պաշտող: Նվաճելով բնությունը, տիրապետելով և իրեն ենթարկելով նրա ուժերը՝ մարդը պետք է ամեն կերպ ձգտի ոչ թե ոչնչացնել բնությունը, այլ իրականացնել մարդկության երազանքը՝ այն է լիակատար ներդաշնակության մեջ մտնել բնության հետ:

Գրականություն

1. Залыгин С. Экология и культура. Новый мир. 1992. № 9. с. 3-12.
2. Платонов Г.В., Иоганзен Б.Г. Нужен международный кодекс экологической этики. Вестн. Моск. ун-та. Сер. 7, Философия. №3. 1991. с. 54-58.
3. Рыжиков А.И. Взаимодействие природы и человека: (О пробл. этнопедагогике). Педагогика. № 11/12. 1992. с. 26-29.
4. Making Development Sustainable. Washington D.C.: The World Bank. 1994.
5. United Nations Department of Public Information, DPI/1344/Rev.1-97-01888- February 1997-5m, Earth Summit Agenda 21 The United Nations Programme of Action From Rio.
6. Калинин В.Б. Формула экологического образования. Экология и жизнь, № 1, 1996.

*S.Սկրտչյան
Ա.Ստեփանյան
Տ.Բայաթյան
ԵՊԼՀ, ՕԼՖ*

Գիտական ղեկավար՝ Լ.Միլիտոսյան,
ԵՊԼՀ, մանկավարժության և լեզուների
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

«Ինքը՝ բնությունը, լուսավորում է մարդուն, նրան տալիս է իմացություն, դաստիարակում է նրան: Բնության մեջ խաբեություն չկա, այն ամենը, ինչ հակադրվում է բնությանը, խաբեություն է»:

Մ. Նալբանդյան

«Բնությունը հավերժական աշխարհներից մեկն է՝ գեղեցիկ, ուրախ, որը ոչ միայն կարող ենք, այլև պարտավոր ենք դարձնել ավելի գեղեցիկ և ուրախ, մեջ հետ ապրողների համար, ովքեր մեզանից հետո պետք է ապրեն նրանում» (Լև Տոլստոյ):

Էկոլոգիան հունարեն բառ է, կազմված է oikos-տուն և logos-գիտություն բառերից: «Էկոլոգիա» եզրաբառը 1866թ. առաջարկել է Յեկելը՝ որպես ընդհանուր գիտություն արտաքին միջավայրի հետ օրգանիզմների փոխկապակցվածության մասին: Էկոլոգիան, որպես գիտություն, ձևավորվել է կենսաբանական գիտելիքների զարգացման որոշակի փուլում, երբ մարդը, աղտոտելով այն, կործանարար, գիշատիչ ներգործություն ունեցավ բնության վրա՝ անտեսելով գոյություն ունեցող օրենքներն ու օրինաչափությունները:

Էկոլոգիայի պատմությունը գնում է դարերի խորքը. հին հունական փիլիսոփայության մեջ ատոմիստական տեսության հիմնադիր Դեմոկրիտը առաջիններից մեկն էր, որ առաջադրեց դաստիարակության բնահարմարության հարցը:

Յետագայում, արդեն 17-րդ դարի սկզբներին, չեխ նշանավոր մանկավարժ Յան Լնուս Կոմենսկին իր մանկավարժական ստեղծագործություններում, քննարկելով Դեմոկրիտի տեսությունը դաստիարակության բնահարմարության վերաբերյալ, փորձեց գիտականորեն հիմնավորել այն՝ նշելով, որ մարդը բնության մի մասնիկն է, և որպես այդպիսին, ենթարկվում է նրա գլխավոր համընդհանուր օրենքներին, որոնք գործում են ինչպես բույսերի և կենդանիների, այնպես էլ մարդու նկատմամբ:

Այսպիսով՝ Կոմենսկին, առաջադրելով դաստիարակության բնահարմարության գաղափարը, այն դիտում էր 2 տեսանկյունից՝ ճանաչել մարդուն՝ որպես բնության մի մասնիկ, որը ենթարկվում է նրա օրենքներին

բնության համընդհանուր օրենքները գործում են բնության և հասարակության մեջ:

Գերմանացի մանկավարժ Ադոլֆ Դիստերվեզը նույնպես դաստիարակության կարևորագույն սկզբունքը համարում էր բնահարմարությունը՝ նշելով, որ դաստիարակության ժամանակ պետք է նկատի ունենալ և՛ ժամանակի պայմանները, և՛ այն աշխարհագրական վայրը, որտեղ ծնվել է մարդը:

Իսկ արդեն 19-րդ դարում հայ մեծ գրող-հրապարակախոս և մանկավարժ Մ.Նալբանդյանը հատուկ շեշտում էր բնության գեղագիտական դերը՝ նշելով, որ գեղեցիկի ամենալավ չափանիշը համարվում է մերձեցումը բնության հետ կամ նրան նմանվելը: Այսօր ավելի քան երբևիցե մարդկությանը անհրաժեշտ է ազատագրվել բնության ուժերի դեմ պայքարողի՝ բնության տիրակալի բարդությից: Գիտնականների կարծիքով էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը այն հիմնական ոլորտներն են, որով հնարավոր է փոխել մարդու կողմից բնության նկատմամբ այդպիսի մոտեցումը, և որի շնորհիվ մարդը կարող է հասնել աշխարհի կայուն զարգացման:

Էկոլոգիական կրթությունը ձևավորում է գիտակցության նոր ձև, որը ի հայտ է եկել սոցիոբնակ պատմության փուլերից որևէ մեկում, երբ մարդկությունը գիտակցեց, որ էկոլոգիան գիտություն է կյանքի վերարտադրման, դրա երկրաբանական, կենսասոցիալական գործոնների մասին:

Էկոլոգիական դաստիարակությունը նոր ուղղություն է մանկավարժության մեջ: Այն պայմանավորված է հասարակական, սոցիալ-տնտեսական փոփոխություններով: Պետք է նշել, որ ժամանակի թելադրանքով պահանջ է առաջացել աճող սերնդին ծանոթացնել շրջակա միջավայրի հետ հաղորդակցվելու այնպիսի ձևերին, որոնք հիմնված են մարդու՝ բնության վիճակի հետ համատասախանեցված գործողությունների և վարքի սկզբունքների վրա: Գիտնականների մի ուրիշ խումբ էկոլոգիական դաստիարակության հիմնական նպատակը դիտում է որպես անձի էկոլոգիական գիտակցության և մտածողության, էկոլոգիայի կուլտուրայի, բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի զարգացում, ինչպես նաև բնօգտագործման գործնական փորձի ձևավորում և տեղյակություն, ճիշտ որոշումների ընդունում, որը և կնպաստի մարդ-

կանց առողջ կենցաղին, կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը, երկրի էկոլոգիական անվտանգությանը:

Այժմ էկոլոգիական դաստիարակություն ասելով հասկանում են անձի ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացների ամբողջական միասնությունը, որը նպատակաուղղված է աճող սերնդի էկոլոգիական կուլտուրայի և աշխարհահայացքի ձևավորմանը: Էկոլոգիական դաստիարակության գործընթացի իրականացման համար կարևոր դեր է խաղում ակտիվ կենսադիրքորոշումը, որը միայն բնության մասին եղած որոշակի հայացքների միասնությունն է: Գոյություն ունի նաև հարցի առարկայական կողմը, որն անառարկելիորեն առնչվում է մարդու անմիջական գործունեության հետ՝ կապված «Մարդ-բնություն-հասարակություն» համակարգում եղած փոփոխությունների օպտիմալացման հետ:

Էկոլոգիական դաստիարակությունը պետք է կազմակերպել՝ մի կողմից հաշվի առնելով նրա համալիրությունը, մյուս կողմից՝ նրա անձնային բնույթը:

Էկոլոգիական դաստիարակությունը ընդհանրացված տեսքով բնության ուժերի յուրացման ու սոցիալականացման, մարդկության հասարակական-պատմական փորձի գործնական դրսևորման հանրագումարն է, մարդու հասարակության ու բնական միջավայրի հարաբերությունների կարգավորման «մեխանիզմը»:

Էկոլոգիական դաստիարակությունը, դաստիարակության մյուս ձևերից տարբերվում է հետևյալ առանձնահատկություններով.

- Եթե էկոլոգիական կրթությունը գլխավորապես նպաստում է դպրոցականների ռացիոնալ մտածելակերպի զարգացմանը, ապա էկոլոգիական դաստիարակությունն ուղղված է ներազդելու զգացմունքային-հուզական աշխարհի վրա և միտված է նպաստելու մարդասիրական արժեքային աշխարհընկալման ձևավորմանը:
- Էկոլոգիական դաստիարակությունը, որպես անձի ամբողջական դաստիարակության բաղադրամաս պետք է իրականացվի մյուս բաղադրամասերի հետ ամբողջության մեջ, հատկապես դաստիարակության այնպիսի ուղղությունների հետ, ինչպիսիք են գեղագիտական, բարոյական, տնտեսագիտական և այլն:
- Էկոլոգիական դաստիարակությունն ունի բարդ, բազմակողմանի կառուցվածք, որի ընկալումը դպրոցականների կողմից պահանջում է դասարանային, արտաուսումնական, արտադպրոցական աշխատանքների միասնություն:

Ուստի ելնելով ժամանակի հրամայական պահանջից անհրաժեշտ է կատարելագործել էկոլոգիական կրթության և դաս-

տիարակության բովանդակությունը, որպեսզի մեր սովորողները լինեն էկոլոգիապես գրագետ մարդիկ:

Յուրաքանչյուր մարդ պատասխանատվություն է կրում բնության պահպանման համար, քանի որ, թեկուզ իր ուժերի սահմաններում, կարող է աջակցել բնության մի անկյան պահպանմանը և բազմացմանը: Վերջին հաշվով, մարդկանց անհատական ջանքերի հանրագումարից է կախված բնության պահպանումը և մարդու գոյության համար անհրաժեշտ բնական միջավայրի ապահովումը:

Գրականություն

1. Вернадский В.И. Химическое строение биосферы Земли и ее окружения. - М., 1987.
2. Гор Л. Земля на чаше весов - М., 1993 г, с. 424 - 430
3. Л. Гумилев Этносы в ландшафтах, М., 1988.
4. Авдонин А.Н., Камаев Р.Б., Рыжевская Д.С. Экологическое сознание: состояние и причины пассивности. Социол. исслед. №8. 1997. с.88-92.
5. Антонов В.М., Буков А.А., Кавыгин В.В. Обучаемые системы управления и экология. Технология машиностроения. Липецк, 1994. с. 122-125.
6. Вернадский Экология - ноосфера: Материалы науч. сессии, посвящ. 130-летию со дня рождения В.И. Вернадского, март 1993. Луч, М., 1994.
7. Арсеньев А.С. Философский аспект экологической проблемы Культура, Традиции, Образование. Вып. 3-4. М., 1995. с. 111-132.
8. Бачинский Г.А. Социоэкология: теоретические и прикладные аспекты. Наукова думка, Статус социоэкологии как самостоятельной науки, ее место в современной системе наук. Киев 1991.
9. Антонов Е.А. Мировоззренческие ориентации в экологии на пороге XXI века. Науч. Ведомости БГУ. № 3. 1996. с. 11-20
10. Реймерс Н.Ф. Надежды на выживание человечества. Концептуальная экология. Рос.открытый ун-т. Изд. центр «Россия молодая»: кология, М. 1992.
11. Реймерс Н.Ф. Основные постулаты социальной экологии К.Г. Юнга Эволюционная и историческая антропология. М., 1994. с.66-77.

*Ս.Օնանյան
Ք.Սարոյան
ԵՊԼՀ, ՕԼՖ*

Գիտական ղեկավար՝ Լ.Միլիտոսյան,
ԵՊԼՀ, մանկավարժության և լեզուների
դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի ղոցենտ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Էկոլոգիական դաստիարակության մեթոդները պայմանավորված են նրա բովանդակությամբ և խնդիրներով: Էկոլոգիական դաստիարակության և կրթության մեթոդներն ու ձևերը տանում են դեպի դպրոցականների՝ բնության, գիտության, տեխնիկայի, տեխնոլոգիայի մասին եղած գիտելիքների արդիականացմանը և նշված հիմունքների բացահայտմանը: Էկոլոգիական դաստիարակության մեթոդները սերտորեն կապված են ուսուցման մեթոդների հետ, և նրանց ընտրությունը որոշվում է մի շարք գործոններով: Էկոլոգիական դաստիարակության մեթոդների ընտրության առանձնահատկություններից մեկը հենց նրա անմիջական կախվածությունն է ուսումնական նյութի բովանդակությունից և ուսուցման ձևից: Այն կոչված է հաղթահարելու այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ձևավորվող գիտելիքների անհամաձայնեցվածությունը և դպրոցական առարկաների մեկուսացումը միմյանցից: Էկոլոգիական կրթության և դաստիարակության մեթոդների համակարգը պետք է հիմնվի դպրոցական առարկաների փոխներգործության վրա:

Էկոլոգիական ուսուցման և դաստիարակության մեթոդների մեջ ուրույն տեղ են գրավում ակտիվ մեթոդները, որոնք առավել արգասավոր ձևով կարող են նպաստել բնաճանաչողական և բնապահպանական ընդունակությունների, կարողությունների և հմտությունների, պահանջմունքների և հետաքրքրությունների ձևավորմանն ու զարգացմանը: Դաստիարակության մեթոդներից հատուկ նշանակություն են ստանում սովորողների գիտակցության ձևավորման, վարքի դրական փորձի ու գորունեության խթանման մեթոդները՝ բացատրությունը, պարզաբանումը, գրույցը, ներշնչումը, հրահանգավորումը, բանավեճը, ընթերցումը, վարժությունը, մանկավարժական պահանջները, խրախուսանքը, մրցույթը և այլն:

Մանկավարժական համակարգը հաջողությամբ գործում է այն պայմանների առկայության դեպքում, որոնք ապահովում են էկոլոգիական գիտելիքների և էկոլոգիական կուլտուրայի ձևավորման գործընթացի արդյունավետությունը:

Այդ պայմաններից են.

- էկոլոգիական գիտելիքների գործնական կարողությունների ու հմտությունների նպատակաուղղված ձևավորումը
- հատուկ կազմակերպված ուսումնադաստիարակչական պարապմունքների, միջոցառումների, միջոցների և մեթոդների համալիրը
- առաջադրանքների կատարման նկատմամբ տարբերակային մոտեցումը
- դպրոցական կոլեկտիվում բարենպաստ ստեղծագործական մթնոլորտը
- ուսուցչի բանիմացությունը, դպրոցականների մեջ բնապահպանման կուլտուրան և հմտություններ ձևավորելու նրա ընդունակությունները
- էկոլոգիական թեմաներով հատուկ մշակված առաջադրանքների համալիրը:

Արտաուսումնական և արտադպրոցական աշխատանքների ճիշտ դրվածքը նպաստում է էկոլոգիական գիտելիքների խորացմանը և խնայողական վերաբերմունքի դաստիարակությանը:

Մյուս մանկավարժական պայմանը կապված է սովորողի մոտ էկոլոգիական գիտության պահանջմունքի ձևավորման հետ: Մշտական էկոլոգիական ակտիվ գործունեության արդյունքում ձևավորվում է դպրոցականի անձի կարևորագույն որակը՝ հասարակական և անձնական շահերի, նպատակների, դրդապատճառների համաձուլումը: Աշակերտի նկատմամբ վստահությունը և համագործակցությունը, աշակերտների ակտիվությունը նույնպես էկոլոգիական դաստիարակության գործընթացի իրականացման կարևորագույն պայմաններ են:

Որպեսզի էկոլոգիական կրթությունը մտնի մանկավարժության գործընթացի մեջ, յուրաքանչյուր ուսուցիչ պետք է հստակ պատկերացնի նրա կառուցվածքը՝ նպատակը, մեթոդները, բովանդակությունը, միջոցները, կազմակերպման ձևերը, կարգավորման և վերահսկողության եղանակները:

Էկոլոգիական դաստիարակության մեթոդների և պայմանների առկայության դեպքում է հնարավոր այս գործընթացի հաջող իրականացումը: Իսկ այժմ մենք կցանկանայինք ձեզ ներկայացնել մեր կատարած հարցման արդյունքները: Ասենք, որ հարցումը կատարվել է՝ կիրառելով բաց հարցաթերթիկի մեթոդը: Հարցմանը մասնակցել են 26 10-րդ դասարանցիներ, իսկ հարցումը կատարվել է Մասիսի թիվ 1 դպրոցում: Այն հարցին, թե դասավանդվող առարկաներից որոնք են գիտելիք տալիս բնության և էկոլոգիայի մասին՝

24 աշակերտ պատասխանել են կենսաբանություն առարկան, որոնցից 5 աշակերտ նշել են մաս ֆիզիկան, 3 աշակերտ՝ հայոց լեզուն, 3 աշակերտ՝ բնագիտությունը, քիմիան և ֆիզիկան, 1 աշակերտ՝ աշխարհագրությունը: 1 աշակերտ մի հետաքրքիր պատասխան էր ներկայացրել՝ գրելով, որ դա գերմաներեն առարկան է: Իսկ 1 աշակերտ էլ գրել է.«Իմ կարծիքով ամեն առարկա իր հերթին տեղեկություն է տալիս բնության մասին»: Այն հարցին, թե հանրապետությունում ինչ միջոցներ են ձեռնարկվում բնության պահպանման համար՝ 9 աշակերտ գրել է, որ կազմակերպվում են շաբաթօրյակներ, նրանցից 7 կարծում են, որ ոչ մի միջոցներ էլ չեն ձեռնարկվում, 6 աշակերտ՝ ծառատունկ և շաբաթօրյակներ, 1 աշակերտ նշել է, որ ամսվա մեջ մեկ անգամ շաբաթօրյակ են անում, իսկ մյուսն էլ՝ տարին երկու անգամ, 1 աշակերտ ծառատունկ է կատարել, բայց ըստ իրեն՝ գոհացուցիչ չէ, իսկ 1 աշակերտ էլ ոչինչ չգիտի: Այն հարցին, թե ակտիվորեն մասնակցում էք շաբաթօրյակների և ծառատունկի՝ 17 աշակերտ գրել է, որ ոչ միշտ է մասնակցում, 11 աշակերտ այս հարցին պատասխանել է՝ ոչ, 4 աշակերտ՝ այո, 1 աշակերտ նշել է, որ ցավոք սրտի չի մասնակցել, իսկ մեկ ուրիշը գրել.«Ոչ այնքան, որովհետև պարտադրված չենք»: Այս պատասխանը մեզ հուզեց, որովհետև ստացվում է, որ 10-րդ դասարանի աշակերտին պետք է պարտադրել, քանի որ նրա մոտ դեռ չի ձևավորվել անհրաժեշտության գիտակցումը: 1 աշակերտ գրել է, որ չի մասնակցել, բայց շատ կուզենար: Այն հարցին, թե օգտվում եք աղբարկղներից՝ 17 աշակերտ գրել է՝ այո, անպայման, 6 աշակերտ գրել է՝ պետք է լինի, որ օգտվենք, իսկ 3 աշակերտ էլ՝ ոչ հաճախ:

Այն հարցին, թե Ձեր կարծիքով, ի՞նչ կարելի է անել քաղաքից դուրս գտնվող հանգստյան գոտիները չաղտոտելու համար՝ 16 աշակերտ գրել է՝ աղբարկղներ տեղադրել, օգտվել այդ աղբարկղներից և չաղտոտել շրջակա միջավայրը: 5 աշակերտ գրել է՝ նպաստել մաքրությունը պահպանելուն, 3 աշակերտ ասել է, որ պետք է մարդկանց նկատմամբ խիստ հսկողություն սահմանել, հետևել, որպեսզի ծառահատումներ չլինեն և կրակ չվառել: 1 աշակերտ մի պարզ լուծում է առաջարկել՝ ասելով, որ պետք է վերցնել մի տոպրակ և աղբը լցնել մեջը: Իսկ մյուսի պատասխանը ավելի խիստ էր՝ առաջարկելով վճարել աղբի դիմաց:

Ամփոփելով այս ամենը՝ պետք է նշել, որ դասավանդվող առարկաներից որո՞նք են Ձեզ գիտելիք տալիս բնության և էկոլոգիայի մասին հարցին, մեծամասնությունը կարծում է, որ դա կենսաբանությունն է: 2-րդ հարցին, թե մեր հանրապետությունում ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում բնության պահպանման համար, փաստո-

րեն ստացվում է, որ աշակերտների մեծ մասը տեղյակ էր միայն ծառատունկ կատարելու և շաբաթօրյակի մասին, որոնք պարբերաբար կազմակերպվում են մեր հանրապետությունում: 3-րդ հարցին, թե ակտիվորեն մասնակցում է՞ք շաբաթօրյակների և ծառատունկ կատարելուն, հարցում կատարելով պարզեցինք այն, որ աշակերտների մեծ մասը չի մասնակցում և նույնիսկ ցանկություն էլ չի հայտնում մասնակցել դրանց: 4-րդ՝ օգտվում է՞ք աղբարկղներից հարցին, մեծամասնությունը գրել է, որ անկասկած օգտվում է, իսկ փոքր թիվ կազմողները կարծում են, որ պետք է լինեն աղբարկղներ, որպեսզի կարողանան օգտվել: Պարզվում է, որ գրեթե բոլորը օգտվում են դրանցից, սակայն թերևս կարելի է ասել, որ դա մեր իրականության հետ չհամապատասխանող փաստ է: Եվ վերջապես 5-րդ հարցը, որը աշակերտներից որոշ ժամանակ պահանջեց դրան պատասխանելու համար: Այն հարցին, թե Ձեր կարծիքով, ի՞նչ կարելի է անել քաղաքից դուրս գտնվող հանգստյան գոտիները չաղտոտելու համար, գրեթե մեծամասնությունը գրել է աղբարկղներ տեղադրելու և դրանցից օգտվելու մասին: Վերջապես կցանկանայինք նշել աշակերտներից մեկի՝ աղբի դիմաց վճար սահմանելու առաջարկը, որը թերևս խելամիտ է և կիրառելի է թվում:

Ինչպես իրավացիորեն գրել է ժան Դրաստը.«Մարդը բարոյական իրավունք չունի ոչնչացնելու կամ ոչնչացման եզրին հասցնելու բնական որևէ տեսակ, քանի որ նա՝ ինքը, չի կարող ստեղծել այն և հետագայում, օգտվելով դրանից, կարող է այնպիսի օգուտներ քաղել, որ չէր էլ նախատեսել»:

Գրականություն

1. Калинин В.Б. Образование для решения экологических проблем, Вести СоЭС, № 3, 2000
2. Веденин Ю.А. Экология человека (культурно-географические аспекты). Предмет экологии человека, Сб.науч.тр. М., 1991.Ч.2. с.121-136
3. Андреева Е.К. Союз с природой. Народный университет. Педагогический факультет. № 11, 1984 г.
4. Рио-де-Жанейрская декларация по окружающей среде и развитию Утверждена Конференцией ООН по окружающей среде и развитию, Рио-де-Жанейро, 1992
5. Ասատրյան Լ.Թ., Սարգսյան Փ.Ա. Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը:

6. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիր. Երևան, 2003
7. Միլիտոսյան Լ., Հակոբջանյան Հ. Դիմելով անցյալի ակութին՝ ոչ թե նոխիրը, այլ կրակը վերցրեք, Սանկավարժական միտք N1, Երևան 2002թ, էջ՝ 111-117
8. Милитосян Л. Роль педагогики в экологическом образовании будущих учителей иностранного языка «Экологическое образование: на пороге «РИО+10 VIII Международная конференция по экологическому образованию. Москва, 2002г.

Համակարգչային ձևավորումը՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան ՊԼՀ-ի
համակարգչային կենտրոն (ղեկավար՝ դոց. Վ.Վ.Վարդանյան)

Համակարգչային էջավորումը՝ Հ.Մ.Էլչակյան
Ս.Վ.Առաքելյան

Ստորագրված է տպագրության՝ 16.12.08
Հանձնված է տպագրության՝ 05.02.09

Տպաքանակ՝ 101

«Լինգվա» հրատարակչություն
Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան
Հասցեն՝ Երևան, Թումանյան 42
Հեռ.՝ 53-05-52
Web: <http://www.brusov.am>
E-mail: yslu@brusov.am